

874

Ա. ՊՈՂՈՑՅԱՆ

Ի. Ս. Հ. Մ.  
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏԵՏԵՍՈՒԹՅԱՆ  
1932 թ. ՊԼԱՆԻ ՄԱՍԻՆ

338.98(47)  
Մ-86

ԳՐԱԴՐԱՄ

1932

66

2802-1

338.98(47)

5-86m

Գ. ՄՈՒՇՈՎ

ՊԱՏԳԱՅԻՆ

1932

ԹՎԵԿԱՆ

Խ. Ս. Հ. Մ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ

1932 թ. ՊԼԱՆԻ ՄԱՍԻՆ

1007  
33420

ԶԵԿՈՒՑՈՒՄ ԿԱՀՄ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ  
2-րդ ՆՈՏԱԾԻՑԱՆՈՒՄ

874  
~~1154~~

104.07.2013

32.297

## ԱՌԱՋԻՆ ՀՆԳԻՄՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

I. ԽՍՀՄ-Ն ՑԵՎ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՑԵՐԿՐՆԵՐՆ  
ԱՆՑԱԾ ՏԱՐՈՒՄ

ՀՆԿԵՐՆԵՐ, ԸՆԴՊՈՆՆՎԱԾ և ՄԱՐՎԱ ՎԵՐՃԸ ՀԱՆՐԱՊՈՒ-  
ՄԱՐՆԵՐ ՄԱԼ: Դա վատ սովորություն չե, մանավանդ  
յիմեք ուշադրությունը կենտրոնացնի հիմնական փաս-  
տերի վրա:

1931 թվականի հանրագումարները չափաղանց  
խրատական են կապիտալիստական յերկրների և Խոր-  
էրդային Միության համար:

Կապիտալիզմի բոլոր յերկրներին համակել ե չոես-  
նրված ուժի ճգնաժամ, այն ել այնպիսի մի ճգնաժամ,  
վորը շարունակում է ավելի ու ավելի խորանալ: Այդ  
բոլոր յերկրները շարունակում են ցած դլորվել, կը-  
ճատելով իրենց արտադրությունը, սահմանափակելով  
շինարարությունը, հարյուրավոր միլիոն նոր սովոր-  
ներ նետելով փողոց:

Դրա հետ միասին Խորհրդային Միության մեջ շա-  
րունակվում է տնտեսական վերելքը, արտադրական ու-  
ժերի աճումը՝ աշխարհում դեռևս չտեսնված մասշտա-  
բով: Այդ ըլքանում արդյունաբերությունը մի նոր խո-  
շորագույն քայլ արեց դեպի առաջ: Շինարարությունը  
ծավալիկ վաչ միայն անտեսության հին, այլ և նոր

ԳԵՐԵԶՄԱՆԻ ԹԱՂԹԱԿԱ  
ՔՐԱՎԻՄ 7082 (ը)  
ՀՐԱՄԱՐ. 2035  
ՊԱՏՎԱՐ 354  
ՏԵՐԱԺ 10,000

4855-91

Հանձնված է արտադրության 27/1 1932 Սա. Ֆ. Բ.  
Տպագրված է 20/11 1932

շյամլերում, գպալիորեն բարելավվեց մասսաների դրությունը թե քաղաքում և թե գյուղում:

Կասլիտալիդմի յերկրների և սոցիալիդմ կտոռուցող յերկրի զարդացման ուղիների հակադրությունը յերեվան յեկավ հ' լ ավելի պարզությամբ և սրությամբ։ Կասլիտալիդմի ուղին-ճղնաժամի ուղի յե, տնտեսական անկման ուղի յե, և ժողովրդական մասսաների համար բացառիկ ոժվարությունների ուղի յե։ Սոցիալիդմի ուղին-աճման ուղի յե, անտեսական վերելքի և քաջարի ու գյուղի լայն մասսաների գրության արժատական բարեկամման ուղի յե։ Կասլիտալիստական յերկրներում աճում են գործազուրկների միլիոնավոր բանակներ, միթխարի չափով ավելանում և սովորական թիվը և աղքատությունը քաղաքներում ու գյուղերում։ ԽՍՀՄ-ում վերացված և գործազրկությունը, և վերջնուրանապես կասեցված և գյուղի աշխատավոր մասսաների աղքատացումը և դիֆերենցիացիան։

Ենք մեջ կրերեմ անցյալ տարվա արդյունքների այն գնահատականը, վորն ամենավերջին որերս տվել և թերվնի բուրժուատկան գիտական-անտեսական մի հիմնարկ։

Կոնյունկտուր հետազոտությունների ինստիտուտի 1931 թվականի 3-րդ յեռամսյակին վերաբերող վերջին «Տեսության» մեջ տրված և նաև 1931 թվականի համաշխարհային տնտեսական զարդացման ընդհանուր բնութագրումը, մանավանդ տնտեսական ճղնաժամի հողի, վրա սրված վայրուտային ու վարկային ճղնաժամի առնչությունը։

Այդ «Տեսության» մեջ ասված և հետեւյալ:

«Համաշխարհային առևտորի 54% ընդդրկող ՅՈ յերկրին համակել և վայրուտային ճղնաժամը, կամ նրանց անմիջականորեն կանգնած են այդ սպառնալիքի առջև։ Վարկային արագարիգում ստեղծված ճղնաժամային արդ սուր վիճակի աղդեցությամբ վերջին ամիսներում նորից սրվեց համաշխարհային կոնյունկտուրայի անկումը։ Բոլոր յերկրների արդյունաբերական արտադրանքը, բացի ԽՍՀՄ-ից, շարունակում է ընկերությունների համաշխարհային արգյունաբերության արտադրանքի ինդեքսը (1928 թվականին հաշվելով 100) ընթացիկ տարիվա հունիսի 83,3-ից հոկտեմբերին իջակ 79,4-ից<sup>1)</sup>։

Միքանի քաղվածքներ ևս բերեմ 31 թվականի 3-րդ յեռամսյակին վերաբերող այդ «Տեսությունից»։

«Տեսությունը» գտնում ե, վոր «համաշխարհային առևտուրն իջել և մոտավորապես 1913 թ. մակարդակին», այսինքն՝ այն մակարդակին, ուրին հանել եր նա մոտավորապես 20 տարի առաջ։ «Ներմուծումը կրծառվեց (հեղինակը համեմատում է 3-րդ յեռամսյակը 2-րդի հետ վ. Ա.) յեկրտական համարյա բոլոր յերկրներում, միմիկայն ԽՍՀՄ-ն ե, վոր կարողացավ ավելացնել իր ներմուծումը նույնիսկ նախորդ յեռամսյակի համեմատաբար բարձր մակարդակից<sup>1)</sup>։ «Յ-րդ յեռամսյակում անտեսական գործունեյությունը շարունակում եր ընկերությունը յերկրներում, բացի ԽՍՀՄ-ից»։ «Դարձյալ ԽՍՀՄ դուրս մնաց անկման ընդհանուր պրոցեսից։ ԽՍՀՄ արգյունաբերության արտադրանքը նորից մեծապես բարձրացավ<sup>1)</sup>։ «Միացյալ Նահանգներում տնտեսությունը գտնվում է բանկային և վարկային ճանաժամի ճղնաժամի աղդեցության տակ։ Մոտիկ ապա-

<sup>1)</sup> Բնդկձված և իմ կողմէց։ վ. Ա.

գայում չի կարելի սպասել բեկում։ Զի կարելի սպասել պրոդուկցիայի անկման կասեցում»։ Կարելի կլինիք բերել նույն վողով ուրիշ քաղվածքներ ևս Անգլիայի, Ֆրանսիայի և այլ յերկրների դրության մասին։

Ի վերջո այս «Տեսությունից» կրերեմ նաև Գերմանիայի 1931 թ. տնտեսական գարգացմանը վերաբերող հիմնական տվյալներ։

1) Գերմանիայի արդյունաբերական արտադրանքը ներկա ժողովնախն էջել և 1890 թվի մակարդակին, այսինքն հետև է գնացել 40 տարով։

2) Գերմանիայի արդյունաբերական ընդհանուր արտադրանքի մեջ ծանր ինդուստրիայի քածինն այս տարի 59-ից ընկել և 45 տոկոսի և դա փորում և արդյունաբերության և վողջ ժողովրդական տնտեսության բուն հիմքերը։

3) Այս տարի կապիտալ-ներդրումները շնորհարության մեջ Գերմանիայում կազմում են 4,5 միլիարդ մարկ, 1928 թվի 8,9 միլիարդ մարկի դիմաց։ Վերջին յերեք տարում ներդրումները տարեց-տարի պակասում են, զորք քայլայում և Գերմանիայի ժողովրդական տնտեսությունը, համենայն դեպք միքանի տարով։

4) Գերմանիայի աշխատավոր ազգարմակության յեկամուտը վերջին տարում և միլիարդով պակաս և լինելու, քան անցյալ տարի։ Ընդամենը վերջին յերկու տարում Գերմանիայի բանվորների և ծառայողների աշխատանքային յեկամուտը 1929 թվի 43 միլիարդից էջել և 33—34 միլիարդ մարկի 1931 թվին, այսինքն յերկու տարում ընկել և 9—10 միլիարդ մարկով։

5) Գերմանիայի աղքային յեկամուտը 1928 թվի 75,4 միլիարդ մարկից հասել և 55 միլիարդ մարկի այս տարի։

Մենք ֆեջ կրերենք մամուլից վերցրած առանձին որդինակներ ևս, վորոնք ցուցի են տալիս, թե նյութական ու կենցաղային ինչպիսի պայմաններում են աղբում այժմ դերմանական բանվորները։ Ահա վերջին որերի մամուլից վերցրած մի յերկու փաստ։

«Որինակ՝ բարձր վորակավորում ունեցող մի փայտամշակ բանվոր, 41 տարեկան, ամռանացած և և ունի 3 յերեխա՝ 5,9 և 11 տարեկան։ Անցյալ տարի ամռանա շաբաթական միջին հաշվով վաճառակում եր մոտ 35 ոռութի։ Այդ ժամանակից սկսած նրա աշխատավարձն էնցվիլ և ավելի քան 20 տոկոսով։ Իսկ զրահետ միասին նա աշխատում է շաբաթվա ընթացքում միայն 24 ժամ։ Այժմ նրա աշխատավարձը 13—14 ոռութ։ Հի անցնում։ Բնակվարձը վճարելուց հետո, հինգ հոգուց բաղկացած այդ ընտանիքի տրամադրության տակ մնում է շաբաթական 6—7 ոռութի՝ սնունդի, լուսավորության, վառելքի, հագուստեղենի և այլ ծախսերի համար։ Հետեւանքը պարզ է։ ընտանիքը դատապարտված է սովորի և ցրտի։

Ահավասիկ մի այլ որինակ՝ շորնիկ մի բանվոր աշխատում և լիակատար բեռնակածությամբ (բախտավոր բացառություն)։ Անցյալ տարի նա շաբաթական ստունում եր 30 ոռութի, այժմ ամենաշատը՝ 24 ոռութի։ Նա ամռանացած է և պահում է իր հաշմանդամ հորը։ Յերեքի ապրուստի համար, բնակվարձը և ամեն տեսակ պարտադիր մուծումներն անելուց հետո, շաբաթական մնում է 10 ոռութի («Խզվեստիա», դեկտեմբերի 9-ը)։

Այսպիսի ամենապարզ որինակներն անտարակույն կարեռապություն նշանակություն ունեն այն պատճառով, վոր վերև մատնանշված փայտապործ և շորնիկ բանվորների կյանքի պայմանները ներկայութեան տիպական

Ին թե Գերմանիայի և թե կապիտալիստական մյուս յերկրների միլիոնավոր բանվորների համար, յերկրներ, վորտեղ միլիոնավոր գործադուրէներ ապրում են աղքատի նպաստով, իսկ հաճախ զբկված են նույնիսկ այդ նպաստից:

Մեր բներած վաստերը բավական են առացուցելու, թե ինչ աստիճանի յե հասել Գերմանիայի տնտեսական քայլքայումը, և թե ճշնաժամն ինչպիսի բացառիկ չարիք ե բեռնել աշխատավորության ուսերին: Սակայն վոչ միայն Գերմանիայում՝ հաղթված յերկրում, այդպիսի կործանիչ ազդեցություն ե գործում ճշնաժամը ժողովրդական տնտեսության և մասսաների գրության վրա. կապիտալիստական մյուս յերկրները ցած են գլորվում նույն ճանապարհով:

Են մեջ կերեմ ավելի նոր հաղթրդագրություն Հար. Ամերիկայի խոչորակույն յերկրներից մեկի՝ Բրազիլիայի դրության մասին, վորի ազդաբնակությունը հասնում ե 42 միլիոն հոգու:

«Բրազիլիայում 30 միլիոն մարդկային եյակ դանդաղորեն մենում ե սովոր, սիֆիլիսից, մալարիա-ցից»—հայտարարում ե Բրազիլիայի Առողջապահության Ազգային Դեպարտամենտի դիրեկտոր Ելիզարիս Պենոն: Սպառման չուկաների կրծամման հետեանքով, ճշնաժամը աշխարհական սուրբ մարդու գործությունը մասնակության մեջ առաջարկություն է նոր աղքատական բարեկարգությունը՝ մասնակության մեջ առաջարկություն համար, վորն իր կազմի վրա չի զգացել տնտեսական բացառիկ ճշնաժամի ստեղծած կյանքի մղձավանդային պայմանները: Դրա համար ավելի հարմար են կենցաղի կենդանի պատկերները, կապիտալի յերկրների բանվորների կյանքի ներկա պայմանների ակնռու պատկերացումը:

Տասնյակ կապիտալիստական յերկրների համակերպնատամբ: Յեվրոպայում, Ամերիկայում կամ յերկրագնդի վորհեա այլ մասում չկա կապիտալիստական մի յերկիր, վորտեղ ճշնաժամբ համակած չլինի արդեն տնտեսության կարևորագույն ճյուղերը, և վորտեղ դրա չորրհիվ աշխատավոր մասաները յենթարկված չլինեն հսկայական աղետի: Մրանք են 1931 թվականի արդյունքները կապիտալիստի յերկրների համար:

Մեր յերկրի աշխատավորների համար լինար և ոլարզուց կերպով պատկերացնել այն ծանր պայմանները, վորի միջ գտնելում են ներկայումս միլիոնավոր բանվորական ընտանիքներ կապիտալիստի յերկրներում: Զավադականց մեծ տարբերություն՝ կա կապիտալիստական յերկրներում կատարվածի և խորհրդարդների յերկրի աշխատավորական կյանքի պայմանների միջև: Աղյուսակներով, թվերով, վիճակաբերական տեսություններով անկարելի յե բավականաչափ բնորոշել կապիտալիստական յերկրներում տիրող դրությունը ԽՍՀՄ-ի աշխատավորության դդալի մասի, մասնավանդ յերեսաւագության համար, վորն իր կազմի վրա չի զգացել տնտեսական բացառիկ ճշնաժամի ստեղծած կյանքի մղձավանդային պայմանները: Դրա համար ավելի հարմար են կենցաղի կենդանի պատկերները, կապիտալի յերկրների բանվորների կյանքի ներկա պայմանների ակնռու պատկերացումը:

ԽՍՀՄ-ում սոցչինարարության 1931 թվականի հաջողություններն ապահովեցին ամբողջ ժողովրդական տնտեսության հետագա բարելավումը: Այստեղ սոցիալիստական տնտեսության արտադրողական ուժերի հղոր վերելքի հիման վրա, տարեց-տարի բարելավում են նաև աշխատավորների կյանքի պայմանները:

Վերջին յերեք տարում, այսինքն՝ հնդամյակի կատարման առաջին՝ տարիներին, արդյունաբերության արտադրանքն աճել էր հետևյալ կերպ, (ըստ արդյունաբերության արտադրանքի վոչ-լրիվ խմբերի): 1929 թվականին արտադրանքի աճումը հավասար է 3.296 միլիոն ռուբլու, 1930 թվականին՝ 3.635 միլիոն ռուբլու, 1931 թվականին՝ 4.139 միլիոն ռուբլու: Իսկ յեթե վերցնենք արդյունաբերության՝ արտադրանքին վերաբերյալ լրիվ տվյալները, ապա նրա աճումը միմիայն 1931 թվականին վաստարեն հասնում է ավելի քան 4.800 միլիոն ռուբլու:

Զափազանց ցուցանշական են և բանվորական բնակչության այս յերեք տարվա աշխատավարձի աճման գերաբերյալ տվյալները: Այդ տվյալները ցույց են տալիս, վոր բանվորական ընտանիքի ամսեկան աշխատավարձը 1929 թվականի սկզբին 89 ռուբլուց 1931 թվականի վերջինին հասել է 146 ռուբլու, այսինքն աճել է 64%-ով: Միմիայն այս տարվա ընթացքում ԽՍՀՄ-ի բանվորների աշխատավարձը բարձրացել է միջին հաշվով 18%-ով: Սև մետաղաձուլման, մետաղահանքերի և ածխահանքերի արդյունաբերության մեջ աշխատող բանվորների աշխատավարձը միմիայն այս տարի ավելացել է 25—36 տոկոսով, նմանապես զդալիորեն բարձրացել է յերկաթուղային ու ջրային տրանսպորտի առարկում աշխատողների, մանավանդ նրանց գլխավոր խմբակների աշխատավարձը (35—50%-ով): Զի կարելի չմատնանչել, վոր 1932 թվականի սկզբից ուսուցիչների և բժշկական աշխատողների աշխատավարձը բարձրանում է միջին հաշվով 22—25%-ով: Այդ աշխատողների միքանի կառակողքիաների համար ավելացումը կազմում է 30 տակոս համար վայմանի վայմանի առաջնային դաշտավայրական համար:

1931 թվականին ԽՍՀՄ-ում ձեռք բերված արդյունքների համար հսկայական նշանակություն և ունեցել բանվորների ակտիվությունը սոցիալիստական շինարարության ասպարիզում: Դրա մասին վկայում են սոցիալիստական մրցության և հարվածայնության աճումը գործարաններում, կոլտնտեսություններում և խորհանտեսություններում: 1931 թվականի վերջերին արդյունաբերության հարվածայինների բանակը հասված 3,5 միլիոն հոգու: Հարվածային բրիգադների թիվը հասավ 200 հազարի:

1931 թվականին կապիտալիստական յերկրներում և խորհրդային Միության մեջ ձեռք բերված արդյունքների համեմատումը վկայում է ինքն իր մասին: Այս տարի զգալիորեն վատացել է կապիտալիզմի յերկրների տնտեսական դրությունը: Դրանով իսկ ի գերեւ յելան այն բաղմաթիվ գուշակումները, վորոնք նախատեսում ենին կապիտալիզմի զարգացման բարելավող հետանկարները:

Սակայն առանձնատպես կարենը ե այն, վոր առայժմ 1931 թվականի արդյունքները վոչ մի լավ բան չեն խոստանում կապիտալիստական յերկրներին և 1932 թվականին: Վոչ միայն ճգնաժամից դուրս գալու վորեն նշան չի յերեսում, այլ ընդհակառակը, ճգնաժամը գտալով ավելի յե խորանում, աշխատավորների կյանքի պայմանները գնալով ավելի յեն վատանում: Այդ յերերներում:

Այդ առթիվ ավելորդ չի լինի վերհիշել միքանի բան յերեկվա վատաներից: Հիրավի, վորքան արագ ջարդ ու փշուր յեղան սոց-դեմոկրատիայի լագերից կապիտալի սպասարկուների՝ ամեն տեսակի եւլուղիաները,

Վկազմակերպված կապիտալիզմի» հաջողությունների մասին։ «Էտապմակերպված կապիտալիզմի» թեորիայից, վերը հնարել եյին 2-րդ հնտերնացիոնալի առաջնորդաները, ինչպես որինակ՝ Հելֆերդինդը, քարեւ-քարի վրա չմնաց։ Դրա փոխարեն Յերկրորդ հնտերնացիոնալի առաջնորդները, ինչպիսին ե, որինակ՝ «ձախ» Ռ. Բառերը, քննելով բանվորներին, աշխատում են հասունացող անցքերից փրկել իրենց ոճիքն այսպիսի Փրազներով։ «Տեսե՞ք, կապիտալիստական աշխարհը յերերում ե, մոտենում ե մեծ վճիռների ժամը» և այլն։ Ինչպես յերեկ «Կազմակերպված կապիտալիզմի» վերաբերյալ իրենց տեսություններով, այնպես ել այժմ «յերերվող կապիտալիզմին» վերաբերյալ «ձախ» Փրազներով, Յերկրորդ բանվորներին, ուզում են խանգարել նրանց՝ իսկական պայքարի անցնելու կապիտալիզմի դեմ։

Ասենք՝ ինչո՞ւ Բառուերը չպիտի խոսի «յերերվող կապիտալիզմի» մասին, յեթե նույնիսկ ամբողջ բուրժուագիտության կողմից ընդունված առաջնորդները հանդում են նույնպիսի հայտարարությունների։ Վերջերս հրապարակվել եր անդիմական բանկի դիրեկտոր Մոնտեղյու Նորմանի նամակը Փրանչիական բանկի նախադահու Մորեյին։ Այդ նամակում առված ե հետևյալը։

«Յեթե վճռական միջոցներ ձեռք չառնվեն կապիտալիստական սիստեմը փրկելու համար, նա կկործանվի ամբողջ քաղաքակիրթ աշխարհում մի տարվա մեջ։ Յես կուզնայի, վոր իմ դուշակումն արձանադրվեր արիսիլներում, վորպեսզի կարելի լինի հենվել նրա վրա ապագայում։» Արձանադրենք, կարծես դրանով նա ավելի լավ ե զգալու իրեն։ (Ծիծառ)։

Իսկ ԽՍՀՄ-ում ընդհակառակը, գործերն ավելի լավ

են գնում։ Յեթե կապիտալիզմի հիմքի ձեղքը գնալով ավելի յե լայնանում, ապա Խորհուրդների յերկրում։ 1931 թվականը հանդիսացավ սոցիալիզմի հիմքի կառուցումն ավարտելու տարին։ Այս տարի սոցիալիստական հատվածը տիրապետող դիրք զբավեց վոչ մէայն քաղաքում, այլև գյուղում։ Դրանով իսկ ամուռ գցված ե սոցիալիստական հասարակության հիմքը։

Սակայն մենք պետք ե հիշենք Լենինի այն խոսքերը, թե հաջողությունները գլխապտույտի չպետք ե յենթարկեն մեղ։

ԽՍՀՄ-ում սոցիալիզմի հաջողությունները հիրառվի մեծ են։ Այնուամենայնիվ, մենք՝ բայլչեկներս պետք ե հիշենք իր հիսնամյա հոբելյանի առթիվ Լենինի արտահայտած այն ցանկությունը, «վոր մենք կուսակցությունը վոչ մի կերպ չպետք ե դնենք շիացած կուսակցության դրության մեջ»։ Լենինիզմը սովորեցնում եր չհանդստանալ ձեռք բերված նվաճումների վրա, այլ սուած զնալ, այն ել զասակարգային պրոլետարական կրկնակի զգոնությամբ, բայլչեկիորեն հաղթահարելով դասակարգային թշնամու դիմադրության դեռևս բազմաթիվ արտահայտությունները։

## II. ՀՆԳԱՄՑԱԿ ԶՈՐՍ ՏԱՐՈՒՄ

ԽՍՀՄ-ի ժողովրդական տնտեսության զարգացման հնդամյա պլանը վերջնականացես ընդունվել եր 1929 թվականի դարնանը։ Այդ տարին միկնույն ժամանակ հնդամյակի կատարման առաջին տարին եր։

Բանվոր դասակարգը հաջողությամբ կատարեց հընդամյակի առաջին տարվա առաջադրանքները։ Դա խանդակառության նոր ալիք առաջացրեց բանվորական մասսաներում։ Հնդամյակի 2-րդ տարվա առաջադրանքները նույնպիս կատարվեցին հաջողությամբ։ Յեկ ար-

գեն այն ժամանակ, հնդամյակի յերկրորդ տարում գա  
մողմունք ստեղծվեց, վոր մենք հնդամյակը կկատարենք  
վոչ թե հինգ, այլ չորս տարում:

Այս տարի հնդամյակի յերրորդ տարին եր: Նա  
նոր հսկայական նվաճումներ բերեց մեր տնտեսական  
շինարարության մեջ:

### 1. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀՆԴԱՄՅԱԿԻ

Արդեն 1931 թ. արդյունաբերության մի շաբք ճյու-  
ղերում հնդամյակը կատարվեց: Հնդամյակը յերկուս և  
կեսից - յերեք տարում կատարած խոշորագույն ար-  
դյունաբերական ճյուղերից ելին՝ նավթային և երեկ-  
տրոտեխնիկական ճյուղերը, տրակտորաշինարարու-  
թյունը և ընդհանուր մեքենաշինությունը: Յես-  
չեմթվի իրենց հնդամյակը կատարած առանձին ձեր-  
նարկությունները: Դրա մասին արդեն հաղորդվել ե  
մամուլում: Սակայն չի կարելի չմատնանչել, վոր մեր  
արդյունաբերական խոշորագույն կենտրոնը, Լենին-  
գրադը հիմնականում նույնպես կատարել ե արդյունա-  
բերական արտադրանքի իր հնդամյակը:

Այժմ մենք հնարավորություն ունենք ի մի ամփո-  
փել հնդամյակի առաջին յերեք տարվա առաջադրանք-  
ների կատարման արդյունքները:

Յեթի վերցնենք արդյունաբերական արտադրանքին  
վերաբերյալ համապատասխան առաջադրանքները,  
կտեսնենք, վոր (վոչ-լրիվ տվյալներով) հնդամյակի  
առաջին տարում (1929) առաջադրանքները կատար-  
վել են 106 տոկոսով, հնդամյակի յերրորդ տարում  
(1930)՝ 107 տոկոսով, հնդամյակի յերրորդ տարում՝  
1931 թվականին՝ 113 տոկոսով: Յեթ դա չնայած այն  
հանդամանքին, վոր այս տարի մի շաբք ճյուղերում

զգալի չափով թերակատարվել ե արտադրության ծրա-  
գիրը: Այլպիսով նույնիսկ այդ վոչ-լրիվ տվյալները<sup>1)</sup>  
ցույց են տալիս, վոր հնդամյակի առաջին յերեք տարի-  
ներից յուրաքանչյուր տարում արդյունաբերության ար-  
տադրանքի առաջադրանքները վոչ միայն կատարվել,  
այլև գերակատարվել են: Ընդ վորում հնդամյակի առա-  
ջադրանքների գերակատարումը տարեց-տարի ավելա-  
ցել է (6, 7, 13 տոկոս):

Հնդամյակի առաջին յերեք տարում մեր ձեռք բե-  
րած հաջողությունները հնարավոր գարձրին գործնա-  
կանորեն զնել հնդամյակը չորս տարում կատարելու,  
հետևապես Խորհուրդների 5-րդ համագործմարի ընդու-  
նած ժամկետից մի տարի առաջ ավարտելու խնդիրը:  
Արդյունաբերության հնդամյա պլանը կատարել՝ նշա-  
նակում ե հասնել արդյունաբերության այնպիսի մա-  
կարդակի: Այս ապահովում ե արդյունաբերական ար-  
դանքների արտադրումը հնդամյակի վերջին տարվա  
համար նախատեսված չափով:

Հնդամյակի այս վերջին (5-րդ) տարվա համար  
նախատեսված եր 30·455 միլիոն ռուբլու արդյունա-

1) Տվյալների լրիվ չինելը բղպում է նրանից, վոր հնդամյա-  
կի առաջնորդ նկատի չեր առնված մի շաբք ճյուղերի արտադրանքը,  
վորոնք միմիայն հնդամյակի կատարման ընթացքում սկսեցին  
վերածվել խաչոր սոցիալիստական արդյունաբերության ճյուղերի:  
Դժբախտաբար մեր վեճակագրությունն ուշացավ և չկարողացավ  
արդյունաբերության արտադրանքի (հնչան և հիմնական ներ-  
դրումների) ներկա հաշվառման մեջ լինել լուսաբանել նրանց մեջ  
տեղի ունեցած փոփոխությունները և լիակատար կերպով արտա-  
ցոլել: Այդ փոփոխությունները վիճակագրական՝ առվագներում՝  
վիճակագրության այդ թերությանը պետք է անհանդապ վերացնել:  
Դա իսկ մակարդակամասնորդային դման մեջավորի աղք

բերական արտադրանք: Ապա հայտնի յեւ, վոր 1931 թվականին (ինչպես մատնանշել ելինք՝ վոչ-լրիվ սվյաներով) արդյունաբերության արտադրանքը կազմելու յեւ 22.159 միլիոն ռուբլի, այսինքն՝ հասնելու յեւ արդյունաբերության արտադրանքի հնդամյակի 5-րդ տարվա համար նախատեսված մակարդակի 73 տոկոսին: Հետեւապես արդյունաբերության արտադրանքի աճման այդպիսի վոչ-լրիվ հաշվառման դեպքում անդամ (Վորտեղ չեն մտցված, որինակ, արագորեն աճող սննդարձյունաբերության մի շարք ճյուղերը), հնդամյակը 1932 թվականին կատարելու համար, անհրաժեշտ կլինի ապահովել այս տարի արտադրանքի աճումը, համեմատած 31 թվականի հետ, 8296 միլիոն ռուբլով, այսինքն՝ արդյունաբերության արտադրանքն ավելացնել 34.7 տոկոսով: Մինչդեռ 1932 թ. պլանում նախագծված առաջադրանքները պետք եւ տան 8 միլիարդ 503 միլ. ռուբ. աճում, այսինքն՝ 36 տոկոսի աճում՝ նախընթաց տարվա դիմաց:

Դա նշանակում եւ, վոր ԽՍՀՄ կենտզործկոմին ներկայացված ժողովրդա-տնտեսական պլանը նախատեսնում եւ արդյունաբերության արտադրանքների նկատմամբ հնդամյակի 5-րդ տարվա առաջադրանքների վոչ միայն կատարում (1931 թ. դիմաց 34.7 տոկոսի աճում), այլև այդ առաջադրանքների գերակատարում (1931 թ. դիմաց 38 տոկոսով): Դրանով միաժամանակ մտավորապես չորս անգամ գերազանցվում եւ արդյունաբերության մինչպատերազմյան մակարդակը: Թե՛ք արդյունաբերության գծով 1932 թ. առաջադրանքները չորս անգամ գերազանցվում են հնդամյակի 5-րդ տարվա արտադրական ծանր արդարենքներն ու արդյունաբերության հիմական ժրաժարենքները:

16

առաջադրանքները տալիս են հնդամյակի վերջին տարվա արտադրանքի նշանակալի գերարեցած տեսքում: Արդյունաբերական արտադրանքի վերաբերյալ քիչ առաջ բերված տվյալները, ինչպես արդեն առված եւ, վերաբերում են միայն արդյունաբերական այն ճյուղերին, վորոնք մտցված են հնդամյա պլանի մեջ (1926-27 թ. գներով): Դրա հետեւանքով այդ թվերի մեջ հաշվի չի առված արդյունաբերության մի շարք ճյուղերի արտադրանքը, հաշվի չի առված հատկապիս հետևյալ ճյուղերի արտադրանքները՝ անտառանյութերի մթերման մի մասը, մսի, ալյուրի-կրուպայի, պտղաբանջարայինի մի մասը, յուղի, թուզնի, սուրճ-սուրբուղատի, գինու, սպիրտի ողու արդյունաբերության և մի շարք այլ բնադրավառներ: Արդյունքն այն եւ, վոր յեթե լրիվ հաշվի առնենք արդյունաբերության ամրող արտադրանքը, առա հնդամյակի վերջին տարիների համար այդ չափերը, համեմատած վերը բերված տվյալների հետ, զգալիորեն կավելանան:

Վերջին տարիների հաշվարկումների համաձայն, արդյունաբերության 1931 թվականի արտադրանքը կազմում է 27,4 միլիարդ ռուբլի, իսկ 1932 թվականին, համապատասխան տվյալների համաձայն, պետք եւ կազմի 37,5 միլիարդ ռուբլի: Նույնիսկ համապատասխան հավելումներ անելով հնդամյակի վերջին տարվա ընդհանուր արտադրանքի ողումարին, մենք պետք եւ անենք այն անվիճելի հետեւությունը, վոր 4 տարվա ընթացքում արտադրանքի ծրագիրը գերակատարվել եւ շատ ավելի, քան ցույց եւ տալիս արդյունաբերության հիմնական շինարարության վոչ բոլոր ճյուղերն ընդդրկող միճակագրությունը:

Արդյունաբերության կապիտալ շինարարության

17

զծով մենք սովորի արադորեն առաջ ենք դնում հնդամյակի առաջադրանքի կատարման մեջ :

Բոլոր հինգ տարիների համար վորոշված եր արդյունաբերության կապիտալ շինարարության մեջ կատարել 13,5 միլիարդ ռուբլու հիմնական ներդրում։

Սյա յերեք տարվա ընթացքում արդյունաբերության (վոչ լրիվ) հաշվարկված ճյուղերի մեջ ներդրված հիմնական գումարը կազմում է 12,3 միլիարդ ռուբլի: Այդ նշանակում են, վոր առաջին յերեք տարվա ընթացքում հիմնական աշխատանքների գումարը կազմում է մի թիվ, վորը մոտ ե ամբողջ հնդամյակի ուրավագծած բոլոր ներդրումների գումարին: Չորս տարվա ընթացքում կապիտալ աշխատանքների գումարում (վոչ ըուլոր ճյուղերում) արդյունաբերությունը կկազմի 20,3 միլիարդ ռուբլի: Այսպիսով նույնիսկ աճող կապիտալ ներդրումների այս վոչ-լրիվ հաշվառման դեպքում ամբողջ հնդամյակը կատարվում է չորս տարում՝ 150 տոկոնի չափով:

Իսկ յեթե վերցնենք առաջին յերեք տարվա կապիտալ ներդրումների վող գումարը, այն ե՝ 16 միլիոնդր ոռորդի և ավելացնենք նրա վրա 1932 թվի կապիտալ աշխատանքների վող գումարը, այն ե՝ 10,7 միլիոնդր ու., ապա 4 տարվա ընթացքում արդյունաբերության ներդրումների ընդհանուր գումարը կհասնի 26,7 միլիոնդր ոռորդու. Սա նշանակում է, վոր կապիտալ ներդրումների գործում 5-ամյակը կատարվում է չորս տարում կրկնապատկումնվ։ Մրանումն է մեր վերջնական հաղթանակի գրավականը, սոցիալիզմի մեջ ապագայի գրավականը չունենալով պահպան և ապագայի ապագայի

1) Տես նախորդ ծանոթությունն (արդյունաբ. արտադրանքի ժամանակագրական պահպանը առաջնահամար առ Վաղարշական դար) :

Այս բանի հետ պիտի համեմատել այն փասովը, վոր 1913 թվին ցարական Ռուսաստանի վողջ արդյունաբերության հիմնական կապիտալը ընդամենը 4.460 միլիոն ռուբլի յեր : Մինչև իսկ հաշվի առնելով այս համեմատության պայմանականությունը (ռուբլիներով), չի կարելի չընդունել, վոր ներկա կապիտալ շինարարության տեմպերն անհամեմատելի յեն մինչ հեղափոխական ժամանակի կապիտալ ներդրումների տճաման հետ :

Ժողովրդական տնտեսության վողջ Հանրայնացված  
սեկտորի մասշտաբով 5-ամյա պլանում վողջ Հնգամյա-  
կի համար նախատեսնվում ելին 47 միլիարդ ռուբլու-  
չափով՝ կապիտալ ներդրումներ՝ 1932 թվի պլանի կա-  
պակցությամբ ժողովրդական տնտեսության կապիտալ  
ներդրումների վողջ գումարը չորս տարվա ընթացքում՝  
կհասնի ավելի քան 54 միլիարդ ռուբլով<sup>1)</sup>: Այսպիսով՝  
ժողովրդական տնտեսության մեջ կապիտալ ներդրում-  
ների չափով մենք պետք ե դերակատարենք 5-ամյակը  
16 տոկոսով:

1932 թվի պլանը 5-ամյակի հիմնական խնդիրների համաձայն, ուժերը կենարոնացնում և արդյունաբերության հիմնական ջոնների վրա՝ սկզբանակարգության, վառելանյութի (հատկապես ածուխի), մեքենակառուցման, առաջին հերթին յերկաթուղային տրանսպորտի մեջենակառուցման վրա:

Կոկսեմ մետաղագործությունից։ Այսուեղ մենք ունենք հատկապես արտադրական առաջադրանքը թերակատարում ընթացելի արվանից։ Դա ար-

1) Այստեղ ես պետք ե վերապահում անել Հաջվածան զգալիսը թերի լինելու մասին, վորի վրա արդեն մատնանշվեց վերապահ:

տահայովնեց նաև 1932 թվի ծրագրի վրա, վորք նրա վուշ բացառիկ անման հետ ժիաժամանակ չեւ տալիս ճամամյա պղանի լիովին կատարումը :

Մե մետաղադործության արտադրական ծրագիրը 1931 թվի 5 միջոն տոննից բարձրանում եւ գալ տարի Յ միջոն տոննիի : Սա պահանջում եւ բացառիկ ուշադրություն մետաղաձուլման դործարանների նկատմամբ : Մինչդեռ ընթացիկ տարվա փորձը ցույց տվեց և հենց մետաղադործության որինակի վրա հատկապես սուր կերպով ցույց տվեց այն անբավարար ուշադրությունը, վոր մենք նվիրում ենք աշխատող դործարաններին : Յեզ կադրերով մատակարարելու նկատմամբ, և՛ հատկապես տեխնիկական մատակարարման նկատմամբ հաճախ տեղի յեւ ունեցել նորակառությունների չափաղանցված հայտերի բավարարում ի հաշիվ աշխատող դործարանների : Այս բանի հետ վոչ մի դեպքում չի կարելի հաշտվել :

Մետաղաձուլական դործարանների արտադրությունը նախաղծված եւ բարձրացնել այնպիսի մասշտաբով, վոր այդ առաջադրանքները կարելի յեւ կատարել միմիայն ամբողջ կուսակցության ջանքերով : Իսկ այդ առաջադրանքները վոչ միայն պետք եւ կատարվեն, այլև գերակատարվեն :

1932 թվականի համար հսկայական ծրագիրը եւ մշակված նաև մետաղաձուլության հիմնական շինարարության գծով : Մետաղաձուլման մեջ ներդրված գումարները կազմում են համարյա 2 միլիարդ ռուբլի : Յերբեք արդյունաբերության վոչ մի ճյուղի մեջ այդքան մի չոշներ չեն ներդրվել մի տարում : Այս տարի մենք ծրագրել ենք դործարկել 24 նոր մետաղաձուլ հնոց : Դա բավական մեծ առաջադրանք է : Մենք կարծում եյինք, վոր այդ նոր մետաղաձուլ հնոցների դործարկումը կդե-

րադանցի այլ պետությունների մետաղաձուլման կըրճատումը : Մակայն դուրս յեկալ, վոր նրանց հետեւից հասնել չի լինի : 1931 թվականին, միայն Հ. Ա. Միացյալ Նահանգներում (հունվարից մինչև սեպտեմբեր), դադարեցված եւ 29 մետաղաձուլ հնոցների աշխատանքը, ֆրանսիայում՝ 24, Անդլիայում՝ 21 և Գերմանիայում՝ 14 մետաղաձուլ հնոցների աշխատանքը : Դա բնակ լավ կյանքի հետևանք չեն, յերբ դադարեցվում են տասնյակ հնոցներ կապիտալիստական պետություններում : Բայց ԽՍՀՄ-ում ինչ գնով ել լինի պետք եւ ապահովել 24 մետաղաձուլ հնոցի աշխատանքը 1932 թվականին : (Ծափեր) :

Ածխարդյունաբերության արտադրական ծրագիրը 1932 թվականի համար նախատեսում եւ 90 միջոն տոնն ածուխ : Մենք նկատի ունենք առավելագույն ծավալել ածխի հանույթը Դոնի և Կուզնեցկի ավագաններում, ինչպես և այլ շրջաններում, վորոնցից հատուկ նշանակություն ունեն Ուրալը և Մերձմուկովյան շրջանը : Վերջինս ամենակարծ ժամանակամիջոցում պետք եւ դառնա վառելանյութի հիմնական բաղա Մոսկվայի և նրա մարզի համար :

1931 թվականին մենք հարկադրված եյինք առանձնապես մեծ ուշադրություն նվիրել վառելանյութի հարցին (ածուխ, նավթ և այլն) : Դոնբասի ածխի հանույթին հետևում եյին Խորհրդային Միության բոլոր անկյուններում գտնվող բոլոր դործարանները : Ածխի հանույթի մեքենայացումը մենք դասեցինք տնտեսական խոշորագույն խոդիրների կարգը : Յեզ այնուամենայնիվ մեր առաջննաշացն այդ ասպարիզում հեռու յեւ բարգարար լինելուց : Որինակ, Դոնբասում վորիչ մեքենաների մոտ մի յերրորդ մասը շարունակում եւ անդործ

մնալ : Աշխատանքի արտադրողականությունն աճում է ծայրահեղորմն դանդաղ : Հետևապես , ավյալ գեպօռմ տեխնիկային տիրապետելու դորձն անբավարար է :

Արեւը «Զա ինդուստրիալիզացիոն» թերթում զետեղված էր . ի . Կասսիորի հոդվածը , վորն այս տարի շատ և աշխատել Դոնբասում : Ըսկե . Կասսիորը իրավացիորեն բեկույով իր ուշադրությունը կենցաղի ու աշխատանքի կազմակերպման վրա , մատնանշում է , վոր մեքենայացմանը վորը «պետք է դրվի վորպես անկյունաքար» , բավարար ուշադրություն չի դարձվում վոչ հանքահում և վոչ ելայդ շախտաներին սպասարկողների կողմից (տեխմատակարարումը և այլն) : Այնուհետև նա նշում է , վոր ածխի փոխադրության և մանավանդ ածուխը հանքահորերից դուրս հանելու դործի մեքենայացումը հետ և մնում ածուխ կտրելուց : Մինչեւ մեքենայացած ծալվալումը նրա կարծիքով կարող եր Դոնբասի ածխարդյունաբերության ասպարիզում աշխատող բանավորների թիվը կրճատել 50 կամ նույնիսկ հարյուր հառարով , ընդդեմ 1932 թվականի վերջերին պյանով նախատեսված 400 հազար հոգու : Այն ժամանակ հարկավ Դոնբասի բանվորների կենցաղի բարելավման ինդիքը կիրակործվեր ավելի հաջող : Իսկ այդ ասպարիզում առանց հետագա բարելավումը մեքենայացման մեջ մեքենայացած ծալվալումը մասին կարելի յե դատել ձեռքի աշխատանքի մեքենայացման , աշխատանքի արտադրողականության բարձրացման , արտադրական ծրագրերի կառարման ասպարիզումը :

Մերենայացման հարցը ամենաայժմեյական նշանակություն ունի արդյունաբերության , գյուղատնտեսության և տրանսպորտի մյուս ճյուղերի համար ևս : Սակայն պետք է խոստովանել , վոր այդ ասպարիզում մեր կառարած առաջնթացը մի շարք դեպքերում ծայրահեղորին դանդաղ է կատարվում : Անտառային արգյունաբերության , սորֆի բեռնելու և պարպելու աշխատանքների ասպարիզում մեր ձեռք բերած հաջողությունների մասին կարելի յե դատել ձեռքի աշխատանքի մեքենայացման , աշխատանքի արտադրողականության բարձրացման , արտադրական ծրագրերի կառարման ասպարիզումը մեր ձեռք բերած հաջողություններով :

Մետաղաձուլման և վառելանյութերի արդյունաբերության ծավալումը , յերկաթուղային արանսպորտի և այլ ճյուղերի կարիքների բավարարումը պահանջում է ել ավելի արագացնել մեր մեքենայացման արդյունաբերության աճումը :

Հնգամյակի առաջին յերեք տարում ԽՍՀՄ-ի մերենայինարարությունը մեծ հաջողություններ ձեռք բերեց : Արդյունաբերության և վոչ մի ճյուղ՝ այնքան չառաջել մինչդեռ մեքենայացման արագացնելը : Բավական և մատնանշել մեքենայացման այն

պիսի ճյուղեր, ինչպիսիք են տրակտորշինարարությունը, զորեղ տուբոդեներատորների, տուբինների, բլյումինների, փորող մեքենաների, նավային դիզելների, հզոր ռադիոէլեկտրանների, հոր փորող դաղդյանների կառուցումը, վորակեսղի շեշտենք այդ ասպարիզում մեր ձեռք բերած նվաճումները։ Այդ հաջողություններն արտացոլում են ԽՍՀՄ-ի բանվոր դասակարգի կարևորագույն նվաճումները տեխնիկային տիրապետելու բնագավառում։

Այդ կողմից առանձնապես ցուցանշական է Ստալինացիան և Խարկովի տրակտորային գործարանների որինական գործությունը։

Ինչպես հայտնի յէ, Ստալինգրադի տրակտորային գործարանն առաջին ամիսներին դժվարությամբ եր կարգի գցում իր գործը։ Քանիցս պահանջվեց ԺՏԿ-ի միջամտությունը։ Ստալինգրադի գործարանին ուղաց ամրող կուսակցությունը։ Վերջինի զորքը կարգի բերվեց, և վերջին միքանի ամիսներում Ստալինգրադի գործարանը կաղմակերպեց որական աշխելի քան 100—110 տրակտորի արտադրությունը։ Ստալինգրադի գործարանի փորձը մեծ չափով ոգտագործեց Խարկովի տրակտորային գործարանը։ Վերջինը վոչ միայն կառուցվեց շատ կարճ ժամանակամիջոցում՝ 15 ամսում, այլև տվեց տրակտորակառուցման տեխնիկայի իրական հաջող տիրապետման որինակ։ Ստալինգրադի գործարանը փեցերդ ամսում տվեց 356 տրակտոր։ Մինչդեռ Խարկովի գործարանը յերկրորդ ամսում արդեն տվեց 386 տրակտոր։ Սա ասպացուցում է, վոր Ստալինգրադի դասերը մեզ համար իզուր չանցան, վոր տրակտորակառուցման տեխնիկայի տիրապետման համար մղվող պայքարը հաջող է ընթանառմ։

24

Ցեխնիկայի տիրապետման համար մղվող պայքարը հոկայական նշանակություն ունի վողջ 5-ամյա պլանի կատարման համար։ Այդ բանում մեր ունեցած իրական հաջողություններից ե կախված վողջ սոցիալիստական շնարարությունը։

Մինչև վերջին ժամանակներս այդ բանում մենք մեծ չափով կախման մեջ ենք զանվում արտասահմանից։ Հաճախ այդ կախումն իրան զգացնել եր տալիս նույնիսկ տնտեսական աշխատանքի յերկրորդական բնագավառներում։ Բայց վերջին տարիների ընթացքում գրությունը սկսեց զգալի չափով փոխվել։ Այժմ մենք արդեն ամբողջովին ազատագրվել ենք կանդիտալիստական յերկնիներից տեխնիկական կախման մեջ լինելուց՝ արտադրության մի շարք կարեվորագույն բնագավառներում։ Տրակտորի և բլյումինգի որինակները բացահայտ կերպով ցույց տվին, թե մենք վորքան հաջող կերպով սկսեցինք առաջ ընթանալ տեխնիկային տիրապետելու մեջ։ Առանձնապես այժմ մեզ անհրաժեշտ ե բարձրորակ պողպատի արտադրության տեխնիկային տիրապետելը։ Յեզ բոլոր փաստերը խոսում են այն մասին, վոր արդ ամբողջ գործում մեր արդյունաբերության համար այժմ գոյություն չունի վոչ մի անհաղթահարելի խոչընդոտ։

Չուր չանցավ հնգամյակի յերեք տարին։ Անհրաժեշտ ե, վոր տեխնիկայի տիրապետման ասպարիզում 1932 թվականը լինի խոշորագույն առաջններաց քայլը մեր ամբողջ աշխատանքի համար, մեր յերիտասարդության ուսման համար։

Եթե ստիպված յեղա մանրամատն կտնդ առնել հընդամյակը չորս տարում կատարելու վրա արդյունաբերության գծով։ Դա բղխում է նրանից, վոր ինդուս-

25

արիային առաջատար դեր և պատկանում ժողովրդական տնտեսության մեջ։ Ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերն ել իրենց վերելքի ընթացքում հենվում են արդյունաբերության աշխատանքի վրա, մետաղների, վառելանյութի արտադրության վրա, ինդուստրիայի արտադրած մեքենաների, գազահաների, գործիքների վրա։

## 2. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀՆԴԱՄՑԱԿԸ

Ամբողջ գյուղատնտեսության վերակառուցումն անհնարին կլիներ, առանց վերափոխելու նրա տեխնիկական բաղան, առանց ապահովելու գյուղատնտեսական արտադրությունը տրակտորներով, կոմբայններով, ցանքի և բերքահավաքի մեքենաներով։ Այդ տեսակետից հնդամյակի յերեք տարում մենք խիշական հեղաշրջում կատարեցինք գյուղատնտեսական մեքենաշինարարության մեջ։ Գյուղատնտեսական մեքենաշինարարությունը մանր անհատական տնտեսություններին հարմարեցված հին մեքենաների արտադրությունից վճռաբար առաջ քայլեց և հասավ այնպիսի բարձր աստիճանի, վորն ավելի բարձր և, քան կապիտալիստական վորևել յերկրի համապատասխան ճյուղի միջին մակարդակը։ 1932 թ. գյուղատնտեսությունն ամբողջովին մեր սեփական տրակտորային գործարաններում («Կրասնի Պուտիվլեց», Ստալինի բարդի և Խարկովի գործարանները) կառուցված նոր տրակտորներից տանալու յի նորից մեկ միլիոնից ավելի ձիու տժ (պայմանական)։ Բացի դրանից, արտադրվելու յի 900 միլիոն ռուբլ գյուղատնտեսական մեքենա, ընդվորում գլխավորակի մեջ համար առանձնապես անհրաժեշտ հայտ-

բույսեր, բամբակ, ճակնդեղ, վուշ, գետանախնձոր և այլ մշակույթներ հավաքող մեքենաներ։

Գյուղատնտեսության վերակառուցման ասպարից զում առաջին և այն ել պարեսոր տեղը պատկանում է մեծենաբակտորային կայաններին։ Այս հնդամյակի ընթացիկ յերեք տարում ՄՏԿ-ները գարձան կոլտնտեսությունների ամենամեծ զողովրդականացած, ամենապետքական կազմակերպությունները։

Միմիայն 1929 թվականի կեսերից մյուս չըջաններում ակսեց արագորեն տարածվել ընկ. Մարկեվիչի նախաձեռնությունը, վոր կիրառվել եր Ռւկրայինայում Շեվչենկոյի խորհանտեսության մեջ։ Յեվ շնորհիվ Համամամիութենական Տրակտորկենտրոնի կազմակերպման, մենք հնդամյակի 3-րդ տարվա վերջին ունենք 1400 ՄՏԿ։ Մրադրված և 1932 թվականին կազմակերպել 1700 նոր ՄՏԿ։ Այդպիսով մինչև 4-րդ տարվա վերջը մենք ունենալու յենք 3100 ՄՏԿ։ Ներկայումս, յերբ Առողջըց դային Միության մեջ կա մու 2500 շրջան, 3100 ՄՏԿ-ները Միության համարյա բոլոր շրջաններում ընդդրկելու յեն կոլտնտեսական գյուղատնտեսության բոլոր հիմնական ճակատամասերը։

Տեղերում տեխնիկական ամուր բաղա ունեցող և իրենց համամիութենական կենտրոնի ընդհանուր գեկավարությամբ ու միասնական պլանով աշխատող մեքենատրակտորային կայանների հսկայական առավելությունն արդեն շատ կողմերով և արտահայտվել։ Չնայած իրենց ունեցած մի շարք թերություններին, ՄՏԿ-ներն աշխի ընկնող դեր են խաղում գյուղատնտեսության բարձրացման ասպարիցում։ Առաջիկայում ՄՏԿ-ների առջև ծառացած են ամելի կարեվոր խնդիրներ սոցիալիզմի կառուցման ասպարիցում։

ՄՏԿ-ների փորձը սկսել և տարածվել գյուղատեղ-  
տեսության նաև նոր ճյուղերում:

Եյազես որինակ, ըսթացիկ տարրում արդեն առեղծա-  
վել է մոտ 200 խոտհունձի մեջնակայան: Այդ տիպի  
կազմակերպության հսկայական դրական նշանակու-  
թյունն արդեն ապացուցված է: Անհրաժեշտ է համար-  
ված ՄՏԿ-ների փորձի հիմն վրա կազմակերպել անտա-  
ռային մեքենակայաններ անտառահատման համար: Ա-  
մենամոտ ժամանակներում մենք ձեռնարկում ենք մո-  
տորաձենորսային կայանների ստեղծմանը ձենարդյու-  
նաբերության մեջ: Չնայած տնտեսության այդ բնա-  
գույնության բոլոր առանձնահատկություններին, հա-  
ցանափակային տնտեսության մեջ ՄՏԿ-ների ձեռք բե-  
րած փորձը պետք է լայն որոշուրծութել, հարկավ հաշվի  
առնելով շրջանների և արտադրության ճյուղերի ա-  
ռանձնահատկությունները:

ՄՏԿ-ների միջոցով պետական կարմաթերապություն-  
ները կոոպերատիվ-կորպորատիվիան կազմակերպու-  
թյունների հետ կապելը, և այդ հիմն վրա վորոշ նպա-  
տակներով ՄՏԿ-ների տիպի հատուկ կարմաթերապու-  
թյուններ ստեղծելը, առաջնակարգ նշանակություն ու-  
նի արագացնելու և սմբացնելու համար մասամբական  
մանր տնտեսության անցումը խոչը սոցիալիստական  
տնտեսության ռելիսերի վրա:

Վերջապես, լսով արշյունքներ տվյաց պետության  
սժանդակությամբ ապրանքային կոլխոզային կաթնա-  
տնտեսությունների ստեղծումը: Այդ գործը պահան-  
ջում է հետադարձում ևս մեր աջակցությունը և դրա հետ  
միասին առավել ևս իրենց կոլխոզներությունների ակ-  
տիվ վերաբերմունքը:

Ի՞նչպես և կատարված «հնգամյակը չորս տարում»

բղութակը դյումատնտեսության գծով՝ Հայտնի յէ, պոր  
գյուղատնտեսության կոլխոզիվացման տակարիզում  
մենք արգեն վազուց գերադանցել ենք 5-ամյակի վեր-  
ին առաջա տուաջողականերին: Հնգամյա պլանի հա-  
մաձայն, 5-րդ տարում կոլխոզիվացվելու յիշ գյուղա-  
ցիսկան տնտեսությունների 20 տոկոսը: Արգեն հնգա-  
մյակի 2-րդ տարվա վերջին կոլխոզիվացված և բո-  
լոր գյուղացիական տնտեսությունների ավելի քան 60  
տոկոսը: Այդպիսով ամբողջ հնգամյակի առաջարանքը  
արգեն յերրորդ տարում կառարկել և զերադանցվել և  
ավելի քան յիշեք անդամը: Հայցհասութիւնային վճռական  
մշանական կոլխոզիվացումը հիմնականում ավարտ-  
վել է: Վոչ մի տարակույս չկա, վոր 1932 թվականը  
կիմի ամբողջ ԽՍՀՄ-ում կոլխոզիվացումը հիմնակա-  
նում ավարտելու տարին:

Դրա համաձայն մեր կուռակցության կենորոնա-  
կան կոմիտեն-մատնանշեց, վոր անհրաժեշտ և ուշա-  
գրությունը կենտրոնացնել կոլխոզնեսությունների  
տնտեսական-կողմանի կազմական ամրայժման վրա, աշ-  
տիկներում կերպում աշխատանքի կազմակերպ-  
ման խուլիսների վրա: Զի կորելի մոռանալ, վոր միա-  
ժամանակ, կոլխոզիվացման վերին աստիճանի արագ  
աճումը նշանակում է, թե միլիոնավոր նոր կողտնուե-  
սականներ գեռես շատ կողմերից չեն կարողացել ազա-  
տագրվել մանր ունիվականատերերի սովորույթներից և  
հայացքներից: Ուստի սոցիալիստական-դաստիարակ-  
չական աշխատանքը կոլխոզնեսուական մասունիքում,  
նախ և առաջ պետության առջև կոլխոզնեսությունների  
տնտեսած պարտավորությունների առաջնակարգ կա-  
տարումն ապահովելը, մանականդ ապրանքային ար-

տաղրանքի հանձնումը, հանդիսանում ե բայլշեիկների կենտրոնական խնդիրը գյուղում:

Խորհանարությունների շինարարության գծով և մենք գերակատարեցինք ամբողջ հնդամյակի առաջարանքները: Հացահատիկային և անասնաբուծական խորհունտեսությունների, ինչպես և մի շարք տեխնիկական մշակույթների խորհանտեսությունների ցանցը ժամանակով ե բացառիկ արագությամբ: Մեր յերկրի կոլեկտիվացման ամբողջ զործում հսկայական դեր խաղցին խորհունտեսությունները, վորպես խոչոր սոցիալիստական զյուղատնտեսության կազմակերպիչներ: Անհրաժեշտ ե առավել համառությամբ ձեռնամուխ մինել վերացնելու այն խոչոր թերությունները, վորոնք առանձնակի պարզությամբ յերեան բերլցին վերջրու, Հացահատիկային միավորման և Սախարութեատի խորհանտեսություններում: Միաժամանակ անհրաժեշտ է վճռական հակահարված տալ սովորաներին ոժանդակություն ցույց տալու խնդրում ոպորտունիստական սուտանումներին:

Ի՞նչպես ե կատարվում ցանքի տարածության ավելացման հնդամյակը: Հնդամյակի վերջում ցանքերի տարածությունը 141 միլիոն հեկտարի հասցնելու առաջարանքը, վոր տվել եր հնդամյա պլանը, հաջողությամբ կատարվեց առաջին յերեք տարում: Մենք արդեն ցանքերի տարածությունը հասցըինք 137,5 միլիոն հեկտարի: 1932 տարվա պլանը՝ ցանքերի տարածությունը հասցնում է 141 միլիոն հեկտարի, այսինքն լրիվ ապահովում է հնդամյակը չորս տարում կատարելու առաջարանքը:

Էնդ սմբին հացահատիկային մշակույթների բնագավառում 1932 թվ. վերաբերող հնդամյակի առաջա-

դրանքները վորոշ շափով թերակատարութելու յին (կատարվելու յին 95 տոկոսով): Զնայած դրան, հացահատիկային պրոբլեմը, չնորհիվ կոլտնտեսական շինարարության հաջողություններին, հիմնականում արդեն լուծված ե մեր յերկրում: Մյուս կողմից արդեն հնդամյակի 4-րդ տարում տեխնիկական մշակույթների ցանքերի տարածությունն ընդարձակելու առաջդրանքն զգալիորեն գերակատարվելու յի (կատարվելու յի 133 տոկոսով), իսկ գտ նշանակում ե վոր մեր արդյունաբերության համար հումքային բազա ստեղծելու մտքով մենք արդեն հնդամյակի 4-րդ տարում ձեռք ենք բերելու ավելի մեծ հաջողություններ, քան նախատեսված է ամբողջ հնդամյա ոլլանի համար: Դրան պետք ե ավելացնել նաև այն, վոր այժմ մեր աշխատանքի ծանրության կենտրոնը դրված է վոչ թե ցանքերի տարածության ընդարձակման վրա, այլ բերքատվության բարձրացման, բերքահավաքի կարգավորման պայքարի վրա:

Եթե մենք հիմնականում լուծել ենք հացահատիկային պրոբլեմը, յեթե դրա հետ միասին տեխնիկական մշակույթների վերաբերմամբ մենք արդեն ձեռք ենք բերել հսկայական առաջադիմություն և տարեց-տարի արագությամբ ավելի ու ավելի առաջ ենք դնում, ապա համեմատաբար հետամնաց ճակտամաս և մնում անանատածական տնտեսությունը: Այժմ մենք հատուկ նանքեր պետք ե կենտրոնացնենք անասնաբուծության բարձրացման խնդիրների վրա: Քանի վոր գտ ամենատերու կերպով կապված ե կերի հաստատուն բազայի ստեղծման հետ, և քանի վոր մեզ համար անհրաժեշտ ե ել ավելի արագացնել տեխնիկական մշակույթների դարդացումը, առաջ կը կը հացահատիկային ար-

առագրանքն ավելացնելու հորդը մնում է վորպես մեր  
ամբողջ աշխատանքի ամենահրատապ խնդիրը:

Դեռ ավելին: Այս տարի մի չարք խոշորագույն  
գյուղատնտեսական շրջաններում, այն ե՛ Միջին և  
Ներքին Վոլգայի, Ռուրալի, Ղազախստանի և Արևելյան  
Սիբիրի մի չարք շրջաններում տեղի ունեցած յերաշոր  
մեղ հիշեցնում ե յերաշտի դեմ պայքարելու գործը:  
Յեթե տասը տարի առաջ յերաշտն ուղղակի սով բերեց  
Հարավի և Արևելքի միջինավոր գյուղացիներին և մենք  
դեռևս թույլ ենինք այդ աղետի դեմ ծավալուն պայ-  
քար մղելու հսմար, առաջ այժմ ժամանակն ե բայլշե-  
կորեն գնել այդ խնդիրը խորհրդացին իշխանության  
աշխատանքի որակարգում:

Վերջապես գյուղատնտեսության հիմնական աշխա-  
տանքների մասին: Այս տարի գյուղատնտեսության  
հիմնական աշխատանքները 3600 միլիոն ռուբլուց նաև  
նելու յն 4360 միլիոն ռուբլու: Այդ պլանով ապահով-  
վում ենաև գյուղատնտեսության հիմնական ներդրում-  
ների աճումը, վրորդ՝ համեմատած ամբողջ հնդամյակի  
4 տարվա ծրագրի հետ, ստանալու յենք պայման գերակա-  
տարում (156 տոկոս):

Մեր ասածից յերեսում ե, վոր ինչպես արդյունաբե-  
րության, այնպես ել գյուղատնտեսության գծով  
և ՍՀՄ-ի պրոլետարիատը վոչ միայն կատարում, այլև  
գերակատարում ե հնդամյակի առաջադրանքները, վոր  
ժողովրդական անտեսության 1932 թվականի պլանը  
հանդիսանում ե հնդամյակը վոչ թե հնդ, այլ չորո-  
գարում կատարելու պլան:

## Յ. ՏՐԱՆԾԳՈՐԾԻ ՀՆԴԱՄՑԱԿԲ

Վորոշ չափով հետ և մնում հնդամյակի կատարու-  
մը տրանսպորտի գծով: Այստեղ հնդամյակի առաջին  
յերեք տարում թերակատարվել են մի չարք առաջա-  
դրանքներ:

1931 թվականին ամբողջ կուսակցությունը պայ-  
քարել ե՛ վերացնելու տրանսպորտում յերեան բերված  
խոշորագույն թերությունները, մանավանդ աշխա-  
տանքի կաղմամիշերպման, չոգեկառքերի և վագոնների  
դիմացրկման բացերը, ինչպես նաև աշխատավարձի հա-  
վասարեցումը: Դրա հետ միասին անհրաժեշտ եր դպա-  
մորեն ամբացնել տեխնիկական բաղան, խոշոր աշխա-  
տանքներ կատարել, մեր տրանսպորտի, մանավանդ  
յերկաթուղային տրանսպորտի վերակառուցման ասպա-  
րելում:

1932 թվականին ծրադրված ե վերակառուցման աշ-  
խատանքների շատ ավելի լայն թափ: Այս տարի գոր-  
ծածության մեջ են մտցվում հղոր չոգեկառքեր, մեծա-  
քեր վագոններ, ինչպես և ելեկտրոնկառքեր, ջերմակառ-  
քեր, ավտոկապ: Դրա հետ միասին տրանսպորտը բարձ-  
րացնելու համար մեծ նշանակություն ե ունենալու այն,  
ինչպես յերբեմն ասում են՝ «փոքր» աշխատանքների կա-  
տարումը, վորոնցից կախված ե աշխատանքի անհա-  
պաղ բարելավումը յերկաթուղային տրանսպորտի մի  
շարք կարևորագույն ճյուղերում:

Յերկաթուղային, ջրային, ճանապարհային և ո-  
ղային տրանսպորտի հիմնական շինարարության հա-  
մար 1932 թվականին հատկացվում ե 3330 միլիոն ռուբ-  
ու: Բնդսմին յերկաթուղային տրանսպորտում աշխա-

տանքները կենտրոնահալու յեն Մոսկվա—Դոնբասի, Դոնբասից դուրս տարվող գծերի և Մոսկվա—Մադինի տուրլակ—Կուտուցիկ գծերի գարգացման վրա:

#### 4. ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՑԱՂԻ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀՆԳԱՄՅԱԿ

ԽՍՀՄ-ի աշխատավոր մասսաների դրության մեջ մենք ունենալու յենք շատ ավելի մեծ նվաճումներ չորս տարվա ընթացքում, քան նախառեալի եր ամբողջ հնգամյակում:

Նախ և առաջ յես կանգ կառնեմ ժողովրդական տնտեսության ասպարիզում աշխատող բանլորների և ծառայողների թվի ընդհանուր աճման վրա:

Հնդամյակի 5-րդ տարում բանվորների և ծառայողների թվի ըստ ծրագրի նախառեավում եր 15,8 միլիոն հոգի: Արդեն 1931 թվականի վերջերին մենք լիոն հոգի: Արդեն 1931 թվականի վերջերին մենք լիոն 18,7 միլիոն հոգի: 1932 թվականի ստուգիչ թվերի ե՝ 18,7 միլիոն հոգի: 1932 թվականի ստուգիչ թվերի եւ առաջնանալու յե բանվորների և ծառամաճայն, եւ առելի մեծանալու յե բանվորների և ծառայողների թվի ըստ հասնելու յե մինչև 21 միլիոն հոգու, վոր նշանակում ե հնդամյակը չորս տարում կատարվելու յե 133 տոկոսով:

Արդյունաբերության մեջ հնդամյակի վերջին տարում աշխատելու յե 4 միլիոն բանվոր, այնինչ հնդամյակի յերրորդ տարվա վերջին աշխատում ե 5.400.000 մյակի յերրորդ տարվա վերջին աշխատում ե 3.490 միլիոն համարյակի չունելու յե 6,2 միլիոնի: Հետեապես անմիջականորեն ինսելու յե 6,2 միլիոնի: Հետեապես անմիջականորեն ինսելու յե 6,2 միլիոնի:

Այդ նշանակում ե, վոր արագորեն աճում ե ԽՍՀՄ-ի

ամենաամուր սոցիալական բազան, բանվոր դասակարգը, ամեն տարի բարձրացնելով իր տեսակարար կերու մեր յերկրի ամբողջ կյանքում:

ԽՍՀՄ-ի բանվորների և ծառայողների բարելավվող դրությունը և կյանքի պայմանները բնորոշելու համար յես կանգ կառնեմ յերեք հանգամանքի վրա, աշխատավարձի, սոց. ապահովագրության և բանվորական որվա վրա՝ ձեռնարկություններում: Այդ բոլոր ցուցանիշների բնադավառում մենք զգալիորեն դերակատարել ենք հնդամյակի առաջադրանքները:

Հնդամյակի վերջին տարում աշխատավարձի ամբողջ Փոնդը կազմելու յեր 15,7 միլիարդ ռուբլի: Փաստորեն 1931 թվականին այդ Փոնդը հառավ 21,1 միլիարդ ռուբլու: 1932 թվականի պլանի համաճայն աշխատավարձի Փոնդը հասնելու յե 26,8 միլիարդ ռուբլու: Հետեապես աշխատավարձի Փոնդի հնդամյակը չորս տարում կատարվում ե 171 տոկոսով: Այս թվերն երենք են վկայում իրենց մասին:

Ապահովագրման բյուջեն հնդամյակի վերջին տարում կազմելու յեր 1950 միլիոն ռուբլի: Փաստորեն այդ Փոնդն արդեն 31 թվականին հասավ 2500 միլիոն ռուբլու: Այսինքն՝ մենք արդեն յերրորդ տարում զգալիորեն գերակատարեցինք սոցազահովագրության հնդամյակը: Առաջիկա տարում սոցիալական ապահովագրության բյուջեն հասնում ե 3,490 միլիոն ռուբլու, այսինքն՝ սոցապահովագրության Փոնդը հնդամյակի չորրորդ տարում համարյա կրկնապատկվելու յե՝ համեմատած հնդամյակի վերջին տարվա առաջադրանքի հետ:

Հնդամյա պլանով նախառեաված եր 7-ժամյա բանվորական որն անցկացնել հնդամյակի վերջին տարում: Իրականում մենք շատ ավելի արագ ենք առաջ գնում:

քան հնդամյակով նախառելված եր, և արդեն հնդամյակով չորրորդ տարում ավարտում ենք 7-ժամյա բանվորական որվա անցկացումն ամբողջ արդյունաբերությամբ:

Վերջապես բնակարանային ու կոմունալ տնտեսության մասին: Այդ ասպարիզում այս տարի վճռակաթելում ստեղծվեց նախ և առաջ ԽՍՀՄ-ի կարմիր ժայռագագում՝ Մոսկվայում: Ինչպես հայտնի յէ, առաջին տարում Մոսկվայի հետ միասին սկսվելու յեն մետաղատներ բնակարանային ու կոմունալ շինարարության բնագավառում լենինգրադում, ինչպես և քանի այլ արդյունաբերական ուայոններում:

Անտարակույս, կոմունալ գործում առաջացած այլ թեկումը խոչըրագույն նշանակություն և ունենալու աշխատավորների կենցաղային պայմանները բարելավելու համար: Մեր ինդիքն ե իրապես իրադորձել աշխատանքների ընդունված ծրագրից և նախապարագութել ԽՍՀՄ-ի ամբողջ բնակարանային և կոմունալ գործի լայն ծավալումը:

Կարիք չկա ապացուցելու, վոր գյուղում աշխատավոր գյուղացիության նյութական բարեկեցության աճումը ներկայումս առաջ և զնում չտեսնված տեմպով: Կոլեկտիվացումը և կուլակության վորպեղասակարգի վերացումը չքավորների ու միջակների ամբողջ մասսայի առջև բաց արին միանդամայն նոր հնարավորություններ, վորոնք համաշխարհային պատմության մեջ առաջին անդամ դուրս են բերում աշխատավորների հիմնական մասսային աղքատությունից և զգուղի խավարից: Դրանով իսկ սկսում և վոչնչացվել քաղաքի և դյուզի ներհակությունը:

## 5. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՅԵՎ ՀՆԴԱՄՑԱԿԻ ԹՇՆԱՄԻՆԵՐԸ

Տնտեսական վերելքի շնորհիվ արագորեն աճեց ԽՍՀՄ-ի ամբողջ ժողովրդական յեկամուտը:

Սոցիալիստական շինարարության յերկրի և կապիտալիստական ամբողջ աշխարհի արժատական տարբերությունը շեշտվում է այն փաստով, վոր այն ժամանակ, յերբ կապիտալիստական յերկրներում տնտեսական ճգնաժամի պատճառով ժողովրդական յեկամուտը ծայրահեղորեն նվազում է, ԽՍՀՄ ժողովրդական յեկամուտի հսկայական վերելքն իր արտահայտությունն ե գտնում նրանում, վոր հնդամյակի չորս տարում ժողովրդական յեկամուտը 100 %-ով հասել ե այն մակարդակին, վորն ուրվադժված է յեղել հնդամյակի վերջին տարվա համար: Այն ե՝ ԽՍՀՄ-ի ժողովրդական յեկամուտը 1932 թվականին գերազանցելու յե 49 միլիարդ ռուբլուց: Դա միաժամանակ նշանակում է, վոր ժողովրդական յեկամուտի սոցիալիստական հատվածի տեսակարգ կշռոն անցնելու յե 90 տոկոսից՝ հնդամյա պլանի 71 տոկոսի հանդեպ:

Մուս ե յերկու խոսք առել պետական բյուջեյի վասին: ԽՍՀՄ-ի կենտղործկոմի նստաշրջանը հատուկ զեկուցում կլսի այդ հարցի մասին, ուստի յես միայն յերկու խոսք կտօնմ դրա մասին:

Հնդամյա պլանում նախատեսված եր, վոր ԽՍՀՄ-ի ամբողջ հինգ տարվա պետրյուջների դումարը կազմելու յե 53.8 միլիարդ ռուբլի: Խոկ փաստուն արգեն հնդամյակի յերեք տարում պետրյուջների գումարը կազմում է ավելի քան 48 միլիարդ ռուբլի: Յեթե գրան ավելացնենք 1932 տարվա պետրյու-

չեն՝ այն ե՞ւ 27,4 միլիարդ ռուբլի, գըտն գումարած տրանսպորտի շահագործման ծախսերը՝ 3,1 միլիարդ ռուբլի, վորը հնդամյա պլանով, նույնակա մտնում եր պետքուղելի մեջ, ապա սեաբյուղելի վերաբերյալ մենք հնդամյակի առաջարրանքն արդեն չորս տարում կատարելու յենք 146 տոկոսով (78,6 միլիարդ ռուբլու գիմաց 53,8 միլիարդ ռ., վորը հնդամյակով նոսխատեսված երամբողջ հինգ տարվա համար):

Սրանք են անվիճելի փաստերը : Զկա մի այնպիսի  
ուժ , վորը կարողանա չնշել այս փաստերը սոցիալիզմի  
պատմության , միջազգային պրոլետարիատի պատմու-  
թյան եջերից :

Սակայն կան կառւցկիներ, վորոնք հակառակն են  
կարծում: Անցյալ տարի կառւցկին թիսել եր մի ամբողջ  
պատմություն, մի գերք «Բայլէկզմը փակուղու առ-  
ջե» վերնագրով: Այժմ նա շարունակում ե «Հերոսա-  
բար» պաշտպանել այդ աշխատառթյունը: Բավական  
ե մեկ-յերկու քաղվածք բերել կառւցկու վերջին գրա-  
կան վարժություններից, դրանց վրա յերկար կանգ-  
չառնելու համար: Ահա թե ինչ ե դրում նա մեր հըն-  
դամյակի մասին.

«Հնգամյա պլանի հաջողությունն առաջին պահին  
ուղղակի նշանակում ե Ռուսաստանի նյութական և ար-  
տադրական ուժերի զգալի բարելավումը, ինչպես ուս-  
ցիոնալացումը վերջին տառամյակի ընթացքում  
կապիտալիստական աշխարհում»: Ճիշտն ասած, պետք  
է վորոշ «Քաջություն» ունենալ՝ համեմատելու ԽՍՀՄ-ի  
«Հնգամյա պլանի հաջողությունը» կապիտալիստական  
ձեռնարկությունների կեղեքիչ ուցիոնալավուման հետ:

Սակայն կառուցկին դրա վրա կանդ չի առնում. Նա դրում է.

«Թուսական պրոլետարիատն սկսած 1918 թվականից ու ավելի ու ավելի ցած է իշխում այն գաղաթնակետից, վարին հասել եր։ Նա սոցիալիզմին չի մտենում, այս ավելի ու ավելի հռուսանում է նրանից»։

Ավելի քան խայտառակ բաներ չեր կարելի ասել։  
Կառուցկու որինակից յերևում ե , վոր նույնիսկ տեսությամբ պարագելը գեթ ծերության որերին չի ապահովում բժացման ու քաղաքական ստորության անարդանքից։ Զուր չե , վոր ամերիկացի հայտնի գրող Լպտոն Սինկլերը կառուցկու «Բայլշեփոմը փակուղու առջե» գրքի առթիվ իր հայտնի հոդվածում ասել եր . «Յես այդ գիրքն անվանում եմ ստորացում Գերմանիայի սոցիալիստական չարժման համար և մի սպառնալիք աշխարհի ամբողջ սողիականական չարժման համար» :

Սակայն Կառուցիկն սոսկ պնդում և կրկնում ե  
լի ԱՀՄ-ից վտարված մենչեւիկների հակահեղափոխական  
լուսանցները : Մենչեւիկներն ել իրենց հերթին չեն անց-  
նում հակահեղափոխական իմաստակության սահմաննե-  
րեց, վորը կայանում ե նրանում, վոր մեր յերկրի ոսցի-  
ալիստական շինարարությունը հայտարարեն պետական  
կապիտալիզմ : Լավ կապիտալիզմ է, թեկուզ պետական,  
առանց կապիտալիստների : Չաղիկ թե մի կապիտալիստ,  
ել չենք իսպանմ բանվորների մասին, հավատա, թե վո-  
րեկի յերկրում կարող ե գոյություն ունենալ պետական  
կապիտալիզմ, ըստ վորում բուրժուազիան և կալվածա-  
տերերը՝ մենշեկների հետ միասին աքսորում ապրելիս  
լինեն : Այսուամենայի մենշեկները չեն քաշվում խո-  
սել ԽՄ-ում պետկապիտալիզմի մասին, չնայած բան-

Վոր դասակարգի միլիոնավոր մասսաների մեջ սոցմբը յա-  
ման հզոր աճմանը, չնայած դյուլացիական միլիոնա-  
վոր տնտեսությունների կոլեկտիվացմանը, չնայած  
կուլակության, վորպես դասակարգի, վերացմանը:  
Արդյոք ԽՍՀՄ-ի պետկապիտավլիղի լավագույն հեր-  
քումը չե՞ գործարաններում և Փարբիկաններում խոր-  
հըրդային իշխանության իրականացյրած 7-ժամյա բան-  
վորական որը: ԽՍՀՄ-ի պետկապիտավլիղի վերաբե-  
րյալ շարաննենդ, սակայն անզոր վայրահաջությունը  
հերքելու համար չե, վոր մենք խոսում ենք այստեղ  
դրա մասին, այլ ուրիշ պատճառներով:

Ենթե մենք հարկադրված ենք կանգ առնել դրա  
վրա, յեթե հարկադրված ենք մատնանշել կառուցկու.  
հակահեղափոխական հարձակումները, ապա միայն այն  
պատճառով, վոր այդ պարոնները կատարում են խոր-  
հըրդային իշխանության և ամրող բանվոր դասակար-  
գի թշնամիների պատվերը: Իսկ այդ պատվերն ե՝ վար-  
կաբեկել սոցիալիզմի գործը, թուրացնել ոտարերկրյա-  
բանվորների վստահությունը Խորհրդային Հանրապե-  
տության նկատմամբ: Իմպերիալիստական բուրժու-  
ազիային այդ հարկավոր ե նրա համար, վորպեսզի հող  
պատրաստի ԽՍՀՄ-ի վրա հարձակվելու, ուալմական  
ինտերվենցիա կազմակերպելու սոցիալիստական հան-  
րապետության դեմ:

Վոր այդ այլպես ե, կարելի յե համոզվել թեկուզ  
կառուցկու նույն «Բայլշեիզմը վակուլու առջե» գրքով:  
Այսաեղ ինտերվենցիայի թափանցիկ կոչերը կառուցկին  
արտահայտում ե հետեւյալ խսոքերով.

«Դեմոկրատիայի հաղթանակը (կարդա՞ բուրժուա-  
կան հակահեղափոխության: Վ. Մ.) Ռուսաստանում վոչ  
միայն ուռւսական շուկան կբանա համաշխարհային ար-

դյունաբերության առջե, այլ չափազանց կնպաստի այդ  
շուկայի ընդարձակմանը... Դրանով սկիզբն ե դրվելու  
մի պրոցեսի, վորը վերջիվերջո կարող ե հաղթանակի  
թերել ներկայիս սոսկալի ճնաժամմի դեմ, վորը ծանրա-  
նում ե ժամանակակից արդյունաբերական բոլոր յեր-  
կաների գլխին... Տարարախտարար այդ շուկան մնում է  
առանց վորեւ նշանակություն ունենալու, քանի դեռ  
տիրապետում ե բայլշեիզմով»:

Միանդամայն պարզ ե կառուցկու այդ հայտարարու-  
թյան իմաստը: Կառուցկին պատրաստ ե իր ուժերի մնա-  
ցորդը նվիրել խորհրդային իշխանության տապալմանը,  
վորպեսզի ոտարերկրյա կապիտալը կարողանա մեր  
յերկրում «աղատորեն» տնորինել նոր շուկան և իշխանության պահպանը աշխատավորներին:

Սակայն վորքան վոր ջանք թափեն պարոն կառուց-  
կիները և իմպերիալիզմի նրա նման սպասարկուները,  
այդ չեն տեսնի:

Մեր ոգտին խոսում են կյանքը, գործը և փաստերը:  
Այդ փաստերը կապիտալիզմի դեմ են, և միաժամանակ  
հոգուտ սոցիալիզմի: Բայլշեիզմները և նրանց հետ միա-  
սին աշխատավորների ամրող մասսան առավել մեծ  
յեռանդով կիրականացնեն իրենց հնդամյակը, կկառու-  
ցեն սոցիալիզմը:

Մեր ողոծի հաղթանակի համար անհրաժեշտ ե մի-  
յենանույն ժամանակ անողոք պայքար մղել սպորտու-  
նիզմի դեմ, ինչ պատմուճանով ել պաճուճված լինի նա: Ի  
պատասխան ուղղուունիստական տատանումների, ի  
պատասխան ուղղուունիստական կամացների՝ 1932 թ.  
առաջադրանքների ուեալ լինելու մասին, մենք պետք ե  
ուժեղացնենք մեր ամրող աշխատանքը և այնպես վե-  
րակառուցենք, վորպեսզի գործնականում ապահովինք

Հնգամյակի ավարտումը չորս տարում։ Բնդ վորում մենք կղեկավարվենք նրանով, ինչ վոր ասել եր ընկ։ Ստալինը մեր կուսակցության ընդունած անտեսական առաջդրանքների կատարման հնարավորությունների մասին։ Ինձ մնում է միայն կրկնել այդ խոսքերը։ «Մեր կերտող միլիոնավոր աշխատավորությունն է։ Մեր կերտող միլիոնավոր աշխատավորությունն է։ Մեր ծրագրի իրական լինելը՝ դա կենդանի մարդիկ են, դա մենք ենք ձեզ հետ, մեր կամքն ե դեպի աշխատանքը, նոր ձևով աշխատելու մեր պատրաստակամությունը, ոլլանը կատարելու մեր վճռականությունն է։ Ունենք արդյոք մենք այդ վճռականությունը։ Այս, ունենք արդյոք մենք արտադրական ծրագիրը կարելի յե և չետեալես մեր արտադրական ծրագիրը կարելի յե և պետք ե իրականացվի»։

Այս խոմքերն ասվել ելին 1931 թվականի արտադրական պլանի առթիվ։ Ավելի մեծ հիմքով այդ խոմքերը պետք ե վերագրել 1932 թ. ծրագրին, վորի քաղաքական հատուկ նշանակությունը շեշտվում և նրանով, վոր դա հանդիսանում և հնգամյակը չորս տարում ավարտելու ծրագիր։

Մենք բոլոր հիմքերն ու նախադրյալներն ունենք այդ ծրագիրը կատարելու համար։ Վճռականություն ունենք արդյոք մենք, բանվոր գտառակարգը, նրա ղեկավարները այդ մեծ ծրագիրը կատարելու համար։ Կավարները այդ մեծ ծրագիրը կատարելու համար։ Այս, ունենք։ Մենք համակված ենք այդ ծրագիրը։ Այս կատարելու վճռականությամբ և կկատարենք։ (Ծակեր)։

### III. ՄՈՄԵՆՏԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ի՞նչ ե պետք 1932 թվականի պլանն իրականացնելու համար, հնգամյակը չորս տարում կատարելու համար։

Այդ հարցին կարելի յե համառոտ պատասխանել։ բարձրացնել մեր գործարանների և ֆաբրիկանների, հանքանությունների, յերկարությունների, խորհութեանությունների և կոլտնտեսությունների աշխատանքի արտադրականությունը։ Լենինը բազմիցս մատնանշել ե, վոր աշխատանքի արտադրողականությունը վերջին հաշվով լուծում և հասարակական նոր իրավակարգի հաղթանակի հարցը։

Տվյալ պահին մենք հարկադրված ենք առանձնապես հիշեցնել այդ, նկատի ունենալով 1931 թվականի այդ տեսակետից անբարեհաջող արդյունքները։

1931 թվականին արդյունաբերության ասպարիգում աշխատանքի արտադրողականությունը բարձրացավ ընդունենք 6,6 տոկոսով։ Իսկ դա բավարար չէ բնավ և շատ հետ և մնում ընդունված ծրագրից։ Դրա արդյունքն այն է, վոր չափ գեպքերում մենք վոչ միայն չենք կատարել ինքնարժեքի սահմանված իջեցումը, այլ մոդհակառակը, աճել և արտադրության և շնչարաբության ինքնարժեքը։ Այդ գրության հետ չի կարելի հաշտվել։ 1932 թվականին մենք պետք ե ինչպես հարկն և պայքար ծավալենք մեր արդյունաբերության և գյուղատնտեսության ու տրանզորտի ասպարիգում, աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու համար։ Առավել ևս այն պատճառով, վոր մենք ամեն ինչ անում ենք, վորպեսզի տրանսպորտում չկրկնվեն անցյալ տարվա փաստերը, վորոնք բավականաչափ վիճեցրին արդյունաբերության ասպարիգում մեր ձեռք բերած նվաճումները։ Այդ բոլորը պահանջում և ծավալում պայքար մղել մի շարք խոշորագույն թերությունների գեմ, աշխատանքի կազմակերպման ու կառավագանան ասպարիգում։

Այդ առնչությամբ յես պետք է կանգ առնեմ մո-  
մենտի հետևյալ հիմնական խնդիրների վրա.—  
ա) արդյունաբերության մեջ, խորհանակառություննե-  
րում և արանսպորտում աշխատանքի կազմակերպման  
հարցերը, բ) աշխատանքի կազմակերպման հարցերը  
կոլտնտեսություններում, գ) ապրանքաշրջանառու-  
թյան ծավալումը, դ) տնտեհաշվարկի կիրառումը, և  
ե) կատարման ստուգումը:

ա) Աշխատանքի կազմակերպման հարցերը.—Ըս-  
թացիկ տարրում այդ հարցերն արդեն ամենասուբ-  
կերպով դրվել են կուսակցության կողմից և իրոք  
հանդիսանում են մեր տնտեսական որդանների աշ-  
խատանքի հիմնական հարցերը: Դրանց թվին են պատ-  
կանում նաև և առաջ մեքենաների ու մեխանիզմնե-  
րի վերաբերյալ գոյություն ունեցող դիմադրկու-  
թյան դեմ, աշխատավարձի համաստեցման դեմ,  
ինչպես և բանվորական ուժը ինքնահոսի փոխարեն  
կազմակերպված ձեռվ հավաքադրելու համար մըզ-  
վող պայքարը:

Դիմադրկության ամենավնասակար հետևանքներն  
ամենացայտուն կերպով արտահայտվեցին յերկաթու-  
զային տրանսպորտում:

Շողեկառքերի դիմադրկության վերացումն իսկույն  
եեթ դրական ազգեցություն ունեցով Հաղ. ձան. Ժող-  
կոմատի շողեկառքային ամրող անակառության վրա;  
Դիմադրկությունը վերացվելուց հետո նվազեց հի-  
վանդ շողեկառքերի թիվը, զգալիորեն պակասեց  
շողեկառքերի փչացումը ճանապարհին, պակասեցին  
դնացքին շողեկառքեր շմառակարարելու դեպքերը և

այլն: Դիմադրկությունից զուրկերթի անցնելը և մեքե-  
նավարի համար վորոշակի պատասխանատվություն  
սահմանելը չողեկառքերի աշխատանքում, մինչև այժմ  
ել ամենուրեք բավականաչափ չեն իրականացված յեր-  
կաթուղային տրանսպորտում: Իսկ դա պետք է հասց-  
նել մինչև վերջը:

Վոչ միայն Հաղորդակցության ձանապարհների  
ֆողկոմատի, այլև տնտեսական մյուս որգանների աշ-  
խատանքում դիմադրկությունը, հետևապես և մեքե-  
նաների, դադդյանների, գործիքների համար պատաս-  
խանատվության բացակայությունը, արտադրական  
վորոշ առաջարանքների կատարման համար պատաս-  
խանատվության բացակայությունը դոյություն ունի  
ամեն մեջ քայլափոխում: Դիմադրկությունն ուժեղա-  
ցավ, մանավանդ, այն դեպքում, յերբ անցյալ տարի  
սխալ մոտեցան անընդհատ արտադրական շաբաթի  
կիրառմանը:

Այժմ այս բոլորը հանրածանոթ են, ուստի զգալի-  
որեն թեթևացել և դիմադրկության դեմ մղվող պայ-  
քարը: Անրհաժեշտ ե միայն ինչպես հարկն և ձեռնար-  
կել ընդունված վորոշումների կատարմանը:

Մյուս կողմից տնտեսական աշխատանքի ամենա-  
խոշոր թերությունը բանվորների և տեխնիկական պեր-  
սոնալի անձնախմբի աշխատավարձի մեջ դոյություն  
ունեցող հավասարեցումն է: Մանր-բուրժուական եկա-  
մենտների ճնշումն այս դեպքում, ինչպես և միշտ յե-  
ղել և դեռ մնում է բավականին ուժեղ: Նա պրակտի-  
կայում համնցում և արտադրության հաջողությունների  
մեջ մեղ մոտ այնքան մեծ չափով պակասող վորակա-  
վոր կարերի շահագրգուվածության թուլացման: Այդ  
պատճառով հավասարեցման դեմ մղվող պայքարը,

ինչպես նաև աշխատանքի վարձատրման դործավարձային սիստեմի կիրառումը հանդիսանում են որվա ամենահրատապ խնդիրները։ Առանց լիկիդացիայի յենթարկելու հավասարեցումը՝ հետեւաբար առանց համապատասխան կերպով ապահովելու վորակավոր բանվորների և տեխնիկական ուժերի աշխատանքի առվելի բարձր վարձատրությունը, հատկապես արդյունաբերության կարևորագույն ճյուղերում, չեղարելի բարձրացնել մեր ձեռնարկներում աշխատանքի կազմակերպման գործը, չեղարելի լիկիդացիայի յենթարկել բանվորական կադրերի հոգունությունը, չեղարելի ինչպես հարկն եւ բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը արդյունաբերության և տնտեսության մյուս ճյուղերում։

Այսպիսով աշխատանքի կազմակերպման հարցերը և առաջին հերթին դիմագրիկության և հավասարեցման դեմ մղվող պայքարի հարցերը պետք եղան մեր արդյունաբերության, սոցիալիստական յերկրագործության, անասնապահության և տրանսպորտի ուշադրության կենտրոնում։

Թե մենք գեռ վորչափ հեռու յենք աշխատանքի ձիշտ կազմակերպումից մեր մի շարք ձեռնարկներում, կարելի յե այդ տեսնել թեկուզ շաքարի արդյունաբերության գործարանների որինակով։ Սայուզսախարի նախագահ ընկ. Ռոբինցովը շաքարի գործարաններն այցելելուց հետո յեկավ հետեւյալ յեղբակացությանը. «Տաքարի գործարանները բաժանված չեն յեղել ցեմերի։ Պրոցեսի առանձին ողակներում հաշվառումը տարբել եր վերամշակվող ճանդեղի վերաբերյալ»։

Շաքարի գործարաններում «չի յեղել արտադրության վերշաքարի հաշվառում, մինչև իսկ արտադրության վեր-

ջում։ Չի յեղել առանձին ողակների աշխատանքի դնահատում, չի յեղել պատասխանատվություն շաքարի արտադրանքը բարձրացնելու գործում, բանվորները չեն կարողացել մորիկիզմայի յենթարկվել՝ պայքարելու շաքարի համար։

Գործարանները չեն ունեցել ճակնդեղի մթերման և նրա գործարան բերելու ժամկետի կոնկրետ պլանը։

Կարելի յե շարունակել հատուկ հետազոտությունների կողմից շաքարի արդյունաբերության մեջ հաստափած խայտառակությունների նկարագրությունը, սակայն բերված փաստերն ել բարվական են։ Հայտնի յե նույնակես, վոր պահանջվեց ձեռք առնել վճռական միջոցներ, մինչև իսկ փոխել ղեկավարներին, վորպեսզի արդյունաբերության գործը բարելավելու համար մղվող պայքարը ծավալիի և ամենից առաջ լիկիդացիայի յենթարկվեն շաքարի գործարաններում աշխատանքի կազմակերպման խոշորագույն թերությունները։ Կարելի յե չկասկածել, վոր թերությունների վճռական բացումը կապահովի՝ արագացնելու վողջ շաքարի արդյունաբերության գործի բարելավումը։

Առանց լիկիդացիայի յենթարկելու հավասարեցումը և դիմագրիկությունը, առանց բարձրացնելու աշխատանքի կազմակերպման գործը մեր ձեռնարկներում, չեղարելի ինչպես հարկն եւ պայքարել 1932 թ. հիմնական խնդրի՝ հնդամյակը չորս տարում ավարտելու համար։

բ) Կոլտնենեսություններում աշխատանքի կազմակերպման խնդիրները պետք եւ հատուկ տեղ գրավեն։

Դիմագրիկությունը և հավասարեցումը լիկիդացիայի յենթարկելու վերաբերյալ կուսակցության տված

զուցումներն այստեղ ևս պետք է գտնեն իրենց կիրառումը։ Սակայն կոլտնտեսություններն ունեն իրենց առանձնահատկությունները, վորոնք չկան արդյունաբերական ձևոնարկներում, կամ ասենք, խորհանություններում։ Խորհուրդների վերջին համագումարն ընդգծեց կոլտնտեսություններում տարված աշխատանքի թերություններն՝ ասելով՝ վոր

«1930թ. կոլտնտեսություններում տարված աշխատանքի դիմավոր և ամենավնասակար թերությունները յեղել են առաջին՝ կոլտնտեսության յեկամուտների բաշխումը վոչ ըստ կոլտնտեսականի աշխատանքի քառակի և վորակի, այլ ըստ չնչի, և յերկրորդ՝ անշնորհք և վատ կազմակերպումը հատկապես բերքահավաքի ժամանակի»։

Ընթացիկ տարում մենք անկատկած ձեռք բերինք վորոշ հաջողություններ կոլտնտեսային շինարարության մեջ, այդ թերությունները վերացնելու գործում։ Սակայն կոլտնտեսային շինարարությունն այնպիսի արագ տեմպերով ե առաջ գնում, այնքան արագ են աճում նոր հաղարատոր կոլտնտեսություններ, վոր Խորհուրդների համագումարի մատնանշած թերությունները դեռ այժմ ել բազմաթիվ գեղեցիկում խոչընդոտ են հանդիսանում կոլտնտեսություններում աշխատանքի արտադրողականության բարձրացման և մասնավորապես բերքահավաքի գործի բարեկավման բնակավառում։

Ընթացիկ տարվա փորձի հիման վրա, յերբ դյուդատնտեսության մեջ կոլտնտեսություններն արդեն ձեռք են բերել բացարձակ գերակշող դիրք, պետք է ստուգել, թե ինչպես են գործնականում իրականացել Խորհուրդների երրդ համագումարի ցուցումները՝ յեկամուտներն ըստկոլտնտեսականի աշխատանքի վորակի և

քանակի բաշխման վերաբերյալ, պետք է ապահովի արտադրության արդյունքների մեջ կոլտնտեսականի նյութական չահագրդովածության ամրապնդումը և դրահետ միաժամանակ ամրապնդել կոլտնտեսությունները, վորպես խոչոր սոցիալիստական տնտեսություններ։ Սակայն հիմնական յեղբակացությունն առանց այն ել պարզ է։

Առանց բարեկավելու աշխատանքի կազմակերպումը, կամ այլ կերպ առած՝ առանց կոլտնտեսությունների կազմակերպչառանտեսական ամրացման, չի կարելի այլահովել կոլտնտեսությունների աճումը, վորպես անտեսության սոցիալիստական ձևեր և չի կարելի իրականացնել մեր առաջ դրված՝ հնդամյակը չորս տարում ավարտելու ինդիրը։

Դ) Ավրանեալաշրջանառության ծավալումը։—Բանվորական մատակարարումը բարեկավելու խնդիրներն այս տարի յեղել են խորհրդային իշխանության հիմնական խնդիրներից մեկը։

Այդ խնդիրների վրա աշխատել ե վորոշ կուսակցությունը։ Անկասկած այս տարի ձեռք բերվեց վորոշ բարեկավում։ Վորոշ ապրանքների գների բարձրացումը բոլորովին չանդրագարձավագրանքանառության վրա, այլ ընդհակառակը, ապրանքաշրջանառությունն զգալի չափով բարձրացավ։ Բայց ձեռք բերված հաջողություններով յերբեք չպետք է բավականակալ։

1932թ. զգալի չափով աճելու յի մասսայական սպառման ապրանքների Փոնդը։ Այդ Փոնդը, յեթե հաշվինք ընթացիկ տարվա մասրածախս գներով, 27,2 միլիարդ ոռուլուց բարձրանում է մինչեւ 35,5 միլիարդ ոռուլու, այսինքն՝ սոցիալիստական սեկտորի մասրածախս շրջանառությունն աճում է 30 տոկոսով։

Ընթացիկ տարում գյուղատնտեսական մթերքների  
մթերումներն զգալի չափով աճեցին անցյալ տարվա  
համապատասխան շրջանի համեմատությամբ։ Զնա-  
յած մի շաբաթ հիմնական շրջաններում տեղի ունեցած  
յերաշտին, այս տարի հացի մթերումները բարձր են  
անցյալ տարվա մթերումներից։ Զնայած բամբակի  
մթերումների անբալարար տեմպին, այս տարվա  
բամբակի մթերումներն արդեն գերազանցել են ան-  
ցյալ տարվա մթերումներից։ Կարտոֆիլի, ձիլի, ինչ-  
պես նաև մախորկայի մթերումները նույնպես գերա-  
զանցում են անցյալ տարվա համապատասխան մթե-  
րումները (20—50 %-ով)։ Մսի, յուղի, արեածաղկի  
և վուշի սերմի մթերումները գերազանցում են անցյալ  
տարվա համապատասխան մթերումները՝ 50—100 տո-  
կոսով։ Թռչունի, պինչայի, կամնեի, ծխախոտի  
մթերումներն անցյալ տարվա նկատմամբ գերազան-  
ցում են ավելի քան 100 %-ով։ Միայն ճակնդեղի  
մթերումները վորհետ են մնում 1930 թվից։ Այդպիսով  
գյուղատնտեսական ապրանքների և այլ մթերքների  
ֆոնդերն այս տարի աճել են զգալի չափով։ Անհրաժեշտ  
է շարունակել պայքար՝ ապահովելու գյուղատնտեսա-  
կան մթերումների ընդունած ծրագիրը։ Մասսայական  
սպառման առարկաներ արտադրող արդյունաբերու-  
թյունը ծավալելու նպատակով 1932 թ. ձեռնարկվում  
են մի շաբաթ նոր կառուցումներ, ընդ վորում շեշտա-  
րվում են կենտրոնից հեռու ընկած շրջաններում շինա-  
րարությունը ծավալելու վրա։

Այսպես, Միջին Ասիայում վորոշված ե կառուցել նոր հզոր տեքստի կոմբինատ, ի նկատի ունենալով

Միջին Ասիայի և Սիբիրի ազգաբնակությանը գործ վածքեղեն մատակարարելու բարելավումը:

Աւրվագեցված ե շաքարի գործարանների ձնաբարության ծալվալման խոչոր ծրագիրը, ընդ վորում այդ գործարանների գլխավոր մասը կառուցվելու յէ Դաշտավայրական և Հեռավոր Արևելքում:

Մսի կոմբինատների և պահածոների գործարանների չինաբարության 1931 թ. ընդունված ծրագիրը ծավալվելու յէ 1932 թ.:

Այս ամենը ցույց է տալիս, վոր խորհրդային իշխանությունը մեծ ուշադրություն է դարձնում բանվորների և աշխատավորական լայն մասսաների մատակարարման գործի բարելավման վրա:

Առաջնակարգ նշանակություն է ստացել առետրական ցանցը, նոր խանուքների կառուցումը ծավալելու խնդիրը: Վերջին տարիների ընթացքում սեղման մասնավոր առեւտուրն ամենեին չի փոխարինվել կոոպերատիվ և պետական խանութներով: Այդ պատճառով ընթացիկ տարբում զգալի չափով ընդարձակվեց խանութների ցանցն ինչպես Յենտրոսայուղի գծով վեց խանութների ցանցն ինչպես Յենտրոսայուղի գծով այսպես և պետական առեւտրի, ինչպես նաև տնայնագործական-արդյունաբերության կոոպերացիայի գծով 1932 թ. խանութների ծալվալման ինդիքն ստանում է ետպելի խոչոր նշանակություն: Անհրաժեշտ է կազմակերպել վոչ պակաս քան 10 հազար խանութ՝ նրանցից վոլտակաս քան 5 հազար խանութ Յենտրոսայուղի գծով ինչպես նաև վոչ պակաս քան 5 հազար խանութ Մատժողկոմատի գծով: Բացի զբանից անպայման անհրաժեշտ է ընդարձակել նաև մյուս տնտ. ժողկումատների խանութների ցանցը:

Առանց պետական-կոռպերատիվ ապրանքաշրջանա-

ության ծավալման և առանց խորհրդային առետուսըն ամեն կերպ զարգացնելու, առանց գնորդի խորհրդային հնդամյակի քաղաքականությունն ավահովելու, չի կարելի ինչպես հարկն եւ բարելավել մատակարարման գործը, վորը հանդիսանում եւ մեր առաջ դրված խնդիրների՝ ամենից առաջ հնդամյակը չորս տարում կատարելու՝ կարելորագույն նախապայմաններից մեկը:

գ) Տնտհաշվարկի կիրառմանը.—Ընթացիկ տարում խոչը նվաճում ունենք անտհաշվարկի արմատավորման գործում։ Այն չափով, ինչ չափով տնտհաշվարկի կիրառումից եւ կախված մեր կուտակումների առումը, նույն չափով բազմաթիվ բնագավառներում տնտհաշվարկի գործը դեռ բոլորովին անրավարար եւ Տնտհաշվարկի կիրառման խնդիրը կանգնած եւ մեր առաջ իր ամբողջ օրությամբ։

1930թ. վարկային ուժորմի համաձայն ընդունված ուղղումների չնորհիլ ստեղծվել են պայմաններ՝ անտհաշվարկն ամրապնդելու, անտնտեսավարությունը վոչնչացնելու և արդյունաբերության ներքին միջոցների մորիվզացիան ուժեղացնելու համար։

Բայց հատուկ նշանակություն եւ ստանում պայմանագրային հարաբերությունների պրակտիկան։ Մեր ընդունած անու պլանների ամրացման տեսակետից, անտեսական կազմակերպությունների հաստատում փոխհարաբերությունների հիման վրա, մեր ձեռնարկություններում և տնտեսական կաղմակերպություններում անտհաշվարկն ամրացնելու տեսակետից պայմանագրերը պետք եւ կարելորագույն տեղ դրավեն առաջիկա տարվա մեր աշխատանքի մեջ։

Ինչպես հայտնի յեւ, անտհաշվարկի մեր սկզբունքները վոչ մի չափով չեն հակասում անտեսության պլա-

նային կազմակերպմանը։ Ընդհակառակը, մեր առնետ հաշվարկը շաղկապված ե, և ավելին՝ յենթակա յեւ ժողովրդական տնտեսության ընդունված պլաննին։ Մյուս շովրդական անտեսությունն ընդունված պլաննին ։ Կողմից անտհաշվարկի արմատացումն անհրաժեշտ ե հատկապես նրա համար, վոր ձեռնարկությունների և անտեսական որդանների աշխատանքում զարդացնելով պատշաճ պատասխանատվությունը և միանույն ժամանակական նախաձեռնությունը, ապահովենք անտեսական ծրագրի կատարերումը։ Պայմանագրական հարաբերությունների սխալեմը լավագույն միջոցն եւ անտեսական պլանը շաղկապելու անտհաշվարկի սկզբունքների հետ, ուստի այդ գործին պետք եւ հատուկ ուշադրություն նվիրեն անտեսական բայլոր որդանները և կազմակերպությունները։

Տնտհաշվարկի կիրառման առողջապահում քիչ չեն ինքանաթյուրումները։ Մի կողմից քիչ չեն անտհաշվարկի արմատացման հանդեպ ցուցաբերված ձեւական բյուրոկրատական վերաբերմունքի որինակները, վորը նշանակում եւ անտեսական շննդարության ասողարիդում կուսակցության վարած քաղաքականության ժխտումը։ Մյուս կողմից գործը հասնում է անտհաշվարկի սկզբունքների բուրժուական բացահայտ խեղաթյուրություններին։ Այդ անսակետից բնօրոշ է անտեսական կազմակերպությունների միջևի հաստատված ուղղակի ապրանքափոխանակության ողբակտիկան, վորը վիճեցնում եւ պլանը, արտացոլում եւ բուրժուական տենդենցիան անտեսական ապարատում (ապրանքային ուսուրաների թագանելը պետությունից, նրանց շուայլ մախումը և այլն), տենդենցիան, վորոնք մատնանշեց կուսակցությունը Սայուզակարի աշխատանքի առթեկ։

Այս բոլորը վկայում են, վոր անպայման անհրաժեշտ  
ե արմատացնել տնտհացվարկը։ Առանց արմատացնելու  
տնտհացվարկը, չի կարելի ավելացնել արդյունաբեր-  
քության ներքին միջոցների կուտակումը, չի կարելի  
խսկական սպայքար մղել անտնտեսավարության գեմ,  
հետեւալիք չի կարելի ապահովել առաջիկա տարվա  
վիթխարի պլանի կատարումը, հնգամյակի ավարտու-  
մը չորս տարում։

Ե) Վերջապես կատարման ստուգման մասին՝  
ժամանակին Լենինը հսկայական նշանակություն էր  
տալիս պետականացնելու բարելավման գործին։

Այդ ժամանակից ի վեր մեր պետական ապարատն  
անտարակույթ բարելավմել են։ Նրա մեջ զգալի չափով  
ավելացել ե խորհրդային իշխանությանը նվիրված  
մարդկանց կադրը, զգալիորեն ավելացել ե և կոմու-  
նիստների թիվը։ Սակայն նկատի ունենալով մեր չի-  
նարարության հոկայական աճումը, զնալով մեծա-  
նում ե մեր պետական, մանավանդ տնտեսական ապա-  
րատը, ընդ վորում ապարատի մեջ հաճախ փոքր զեր  
չեն խաղում բանվոր դասակարգին խորթ այն տարրե-  
րը, վորոնք ինչպես հարկն ե հարազատ չեն դարձել  
սոցիալիստական շինարարությանը։

Ուստի Լենինի ցուցումները՝ ապարատի նկատմամբ  
կոմունիստների ունեցած խնդիրների մասին պետք ե-  
ղասվեն ընթացիկ մոմենտի կարելուագույն խնդիրնե-  
րի կարգը։ Փամանակին Լենինն ասել եր՝ «անհրաժեշտ  
ե, վոր նրանք, այդ կոմունիստները տիրապետեն այն  
ապարատներին, վորտեղ նրանք դրված են, և վոչ թե  
այնպես, ինչպես հաճախ կատարվում ե մեզ մոտ, յերբ  
այդ ապարատն ե տիրապետում նրանց»։

Հենց այն ժամանակ, 1922 թվականին, Լենինը  
մատնանշում եր հետեւյալը։

«Ստուգել մարդկանց և ստուգել դործի փաստացի  
կատարումը, այդ ե, դարձյալ այդ ե, միայն այդ ե մեր  
կատարումը, ամեն պարզ է, ամբողջ քաղաքականության ա-  
ամբողջ աշխատանքի, ամբողջ քաղաքականության ա-  
անցքը։ Դա միքանի ամսվա, մի տարվա գործ չե,  
այլ միքանի տարվա գործ ե»։

Այսպես եր ասում լենինն իննը տարի առաջ՝  
իսկ ի՞նչ ունենք մենք ներկայում։ Ի՞նչ վիճակի  
մեջ են մեր տնտեսական ապարատը, մեր պետական որ-  
գանները ներկա պահին։

Այդ հարցին յես կուտասախանեմ ընկ. Անդրեյեվի  
խոսքերով, վորը ծանոթանալով Հաղորդակցության  
ձանապարհների ժողովում ապարատին, հետեւյալ  
ձեռվով բնութագրեց այդ ապարատը։

«Ապարատներն ստեղծվել են ինքնահոսով, կա-  
մակերպչական հստակություն չկա ապարատների կա-  
ռուցյածքում, չկա ֆունկցիաների և պարտականու-  
ուուցյածքում, չկա սահմանադում հիմնարկների մի-  
թյունների ճշգրիտ սահմանադում հիմնարկների մի-  
ջեվ և պատասխանատու աշխատողների միջեվ։ Չնա-  
ցեվ յորհրդային զտման կիրառմանը, ապարատում  
յած խորհրդային դրել անպետք աշխատողներ։ Կատա-  
րաբջյալ բուն են դրել անպետք աշխատողներ։ Կատա-  
րելապես բացակայել ե ամբողջ ապարատի և առանձին  
պատասխանատու կատարողների աշխատանքի հաշվա-  
պատասխանատու բացակայում ե նաև կատարման վերահսկո-  
ուումը։ Բացակայում ե նաև կատարման վերահսկո-  
ուությունն ու ստուգումը Հաղորդակցության ձանա-  
պարհների ժողովում ապերատիվ և կենտրոնական  
վարչություններում»։

«Չի յեղել Հաղորդակցության ձանապարհների, վոչ  
ժողովում պահանջման կենտրոնական հիմնարկների, վոչ

շտատային կոնտինգենտների, վոչ ել առկա աշխատաղների թվի ճշգրիտ հաշվառում։ Ճշգրիտ տվյալներ յերեվան բերգեցին միմիայն Հաղորդակցության ձանապարհների ժողկոմատի շտատների կրծատման աշխատանքի ընթացքում»։

Հարկավ, ընկ. Անդրեյելը չսահմանափակվեց այդ փաստերն արձանագրելով, այլ ընդհուպ ձեռնամուխ յեղավ Հաղորդակցության ձանապարհների ժողկոմատի ապարատի բարելավմանը։

Նկատի ունենալով, վոր Հաղորդակցության ձանապարհների ժողկոմատի ամրող ապարատն առ 1-ն հոկտեմբերի բաղկացած եր 6954 հոգուց, իսկ ըստ շտատների՝ 7960 միավորից, վոր ակնհայտորեն չեր համապատասխանում գործի շահերին, Հաղորդակցության ձանապարհների ժողկոմատի ապարատը կրծատվեց 2204 հոգով, իսկ ըստ շտատների՝ 3195 միավորով։ Այժմ կիրառվում են նաև մի շարք ձեռնարկումներ Հաղորդակցության ձանապարհների ժողկոմատի ապարատը բարելավելու համար։

Սակայն պարզ ե, վոր Հաղորդակցության ձանապարհների ժողկոմատին վերաբերող փաստերը պետք ե դաս հանդիսանան վոչ միայն տրանսպորտի, այլև տնտեսական այլ կազմակերպությունների համար։

Ժամանակ ե իսկապես վերջ տալու այն ինքնահոսին և անհոգությանը, վոր ցուցաբերվում ե գործի կաղմակերպմանը հիմնարկներում։ Ժամանակ ե վերջ տալ կառավարման ապարատի բարելավմանը ցուցաբերվող աղայական, արհամարհական վերաբերմունքին։ Ինչպես պետապարատի դերի աղայական արհամարհական վերաբերմունքը, այնպես ել մանր-բուր-

ժուական թերագնահատումը վոչ մի առնչություն չուն նեն բանվոր դասակարգի շահերի հետ, խորհրդային և տնտեսական հիմնարկների կոմունիստ զեկավարման հետ։

Մեզ մոտ, տնտեսական կառավարման գործը բարելավելու համար այժմ ստեղծվել են չափ ավելի նպաստավոր պայմաններ։ Այդ դժվար չե ցույց տալ։

Ինտելիցիանցի շարքերում, մասնավորապես ինժեներա-տեխնիկական կադրերում, վերջին ժամանակական վայրուց տատանումներից ու հակառակափոխական վեյլույթներից հետո, զգալի ըրջադարձ կատարվեց դեյլի խորհրդային իշխանությունը։ Այսուղ վճռական դեր խաղացին արդյունաբերության և դյուլատներության սոցիալիստական շինարարության հաջողությունները։

Դա, այսպես ասած, գործի մի կողմն ե։

Գործի մյուս կողմն այն ե, վոր պրոլետարական կաղըելից մասնագետներ պատրաստելու աշխատմանը սույնպես զգալիորեն առաջ դնաց։ Դա կարելի յեւ սարանել չափականց պարզ, համոզիչ թվերով։

Ահավասիկ փաստերը։

Հնդամյակի սկզբին, 1928 թվականին, մեր բոլոր տեխնիկական ԲՈՒՀ-երում սովորում եր 87.000 հոգի։ Ներկայումս մեր տեխնիկական ԲՈՒՀ-երում արդեն ունենք 273 հազար ուսանող՝ այսինքն՝ յերեք անդամ ավելի, քան յերեք տարի առաջ։ 1932 թ. ընթացքում տեխնիկական ԲՈՒՀ-երում ուսանողների թիվն աճելու յեւ մինչեւ 380 հազար։

Նման պատկեր ունենք նաև տեխնիկումներում։ 1928 թ. տեխնիկումներում սովորում եյին 149 հազար

աշակերտ : Ներկայումս տեխնիկումներում սովորում են 511 հազար, այսինքն՝ տեխնիկումներում աշակերտների թիվը յերեք տարում աճել է համարյա յերեք և կես անգամ : Գալ տարվա վերջին մեր տեխնիկումներում յենթադրվում է ունենալ 725 հազար աշակերտ :

Այս թվերի կապակցությամբ պետք է հիշել իր ժամանակին մեր ըրջանում գոյություն ունեցած տարածայնությունները՝ տեխնիկական ԲՈՒՀ-երի և տեխնիկումների խնդրի չուրջը : Յերեք—յերեք և կես տարի առաջ մի շարք ընկերությունների վիճելի ելին համարում վոչ միայն բոլոր տեխնիկական ԲՈՒՀ-երը և տեխնիկումները համապատասխան որգանների անտեսական կոմիսարիատներին հանձնելու խնդիրը, այլ և վճռականապես առաջին հանձնելու խնդիրը, մի քանի տեխնիկական ԲՈՒՀ-եր և տեխնիկումներ այդ ժողովածատների հանձնելու դեմ : Կուսակցությունը վճռական հակահարված տվեց այդ արամադրություններին : Այժմ պարզ է, թե վորչափ ժամանակին ե յեղել ընդունված վորոշումը : Այվարող ե հերքել, վոր յեթե այն ժամանակ ընդունվելին այդ վորոշումները, ապա մենք սոցիալիստական շինարարության համար ահհրաժեշտ կադրերի պատրաստման գործում այժմ կդժնվելինք խղճուկ դրության մեջ :

Իհարկե, կադրերի պատրաստման արագ աճումն ունի իր վոչ պակաս թերությունները : Պետք է լուրջ կերպով զբաղվել կադրերի պատրաստման աշխատանքի և այդ գործի կազմակերպման ստուգումով, այդ բանում համապատասխան դեկավարություն ապահովելու համար :

Բայց և այսպես մյուս կողմից անկասկած մեր կադրերը՝ չնորհիվ ժամանակին ձեռք առնված միջոց-

ների՝ մեծ չափով աճեցին, անցան արդեն ուսման մեծ չփոլա և տալիս են մեղ՝ անցյալում չտեսնված՝ հնարավորություններ մեր անտեսական կազմակերպությունների և վողջ պետական ապարատի աշխատանքները բարելավելու համար : Հարկավոր ե միայն, վորպեսզի մեր տնտեսական որգանների ղեկավարներն ինչպես հարկն ե բայց ենիկորեն ձեռնարկեն ապարատի աշխատանքի բարելավման, մարդկանց ընտրության, նրանց դասավորմանը և վոր գլխավորն ե, կատարման իսկական ստուգման կարգավորմանը :

Կատարման ստուգման բացակայությունը տվյալ պարբաններում հանդիսանում է մեր որգանների և կառավարական ապարատի աշխատանքի ամենախոշոր թերությունը : Մենք այստեղ դեռ ուժեղ կերպով կաղում ենք, պարզ կորոնացիոն ժամանակամատական առաջարկությունը :

Այդ պատճառով մենք հույս ունենք, վոր խորհուրդների կենտրոնացմը հավանություն կտա Ժողկոմիորհի նախադին և կատարման ստուգման առաջարկին : Այստեղ առված ե հետեւյալը :

«Բոլոր խորհրդային և անտեսական որգանների (ԺՏԳԽ, Մատժողկոմատ, Հաղորդակցության Ճանապարհների ժողկոմատ, Հողժողկոմատ, անտմիավորումների ուշադրության կենտրոնը լինելու յերականության, կառավարության և իրենց սեփական վորոշումների կատարման ստուգումը : Բոլոր խորհրդային և անտեսական որգանների գործնական աշխատանքը պետք ե ղեկրեային, ղերեկտիվային վորոշումների ունեցնելուց պահանջմանը առաջարկանում իրենց ստորադաս որգաններին արված առաջարկանքների կատարման սիստեմատիկ ստուգման ունելու վրա» :

Մեր բոլոր որդանների գործնական աշխատանքները «գեկրետա-դիրեկտիվային վորոշումների ռելսե-րից, իրականում իրենց ստորադաս որդաններին տրված առաջարևանքների կատարման սիստեմատիկ ստուգման ռելսերի վրա փոխադրելու» գործում պետք է իրակա-նացվեն հետեղականորեն և բայց իրենք հիմա նարկների և տնտեսական կաղմակերպությունների ղե-կավարները։ Զի կարելի այդ աշխատանքները գցել ու-րիշների վրա։

Ավելին. փառական կատարման ստուգման ըն-թացքում ե, վոր ինչպես հարկն ե աճելու յե մեր տըն-տեսական փորձը, կարդավորվելու յե տնտեսական կա-ռավարումը և ապահովվելու յե իրականում կու-սակցության քաղաքականության կիրառումը։ Մեր ժողովրդատնտեսական պլանը տալիս է քաղաքա-կան դիրքավորում վողջ սոցիալիստական շինարարու-թյան համար։ Այդ քաղաքական դիրքավորումը կյան-քում կիրառելը կախված է նախ և առաջ այն բանից, թե ինչ տեմպով առաջ կընթանա արտադրության և կառավարման տեխնիկայի տիրապետումը, ի նկատի ունենալով այստեղ նաև աշխատանքի կաղմակերպման խնդիրները։ Իսկ դա իր հերթին մեծ չափով պայմա-նավորված է այն բանով, թե ինչքան ե բարձրանում կատարման ստուգման զործը։

Կատարման ստուգման կարգավորումը և կոնկրետ դեկալարության ապահովումը ըստ եյության միե-նույն զործի յերկու կողմերն են։ Այդ պատճառով վեր-ջին ժամանակներս վորոշ կաղմակերպչական վերակա-ռուցում կատարվեց տնտեսական բնագավառում, ինչ-

պես որինակ՝ անտեսական միավորումների մահարա-ցումը։

Սոցիալիստական շինարարության մեծ չափով աճման հետ մեկտեղ և վերջին տարիների ընթացքում խորհրդային իշխանության տուաջ դրված հոկայական խնդիրների ծավալման հետ առաջիկա տարում այդ կազմակերպչական խնդիրները, հատկապես կատար-ման ստուգումը, ստանում են կարելորադույն նշանա-կություն։

Ժողովրդական տնտեսության պլանի կենտրոնա-կան խնդիրները կատարելու հնդամյակը չորս տա-րում կատարելու համար չի կարելի ծավալել իսկական պայքար, առանց բոլոր խորհրդային և տնտեսական որդաններն աշխատանքի նոր ռելսերի փոխադրելու, սուանց կոնկրետ դեկալարությունն ու գործնականում կատարման ստուգումն ապահովելու։

Այսպիսիք են մոմենտի հիմնական խնդիրները, վորոնց լուծման համար մեր կուսակցության զեկա-վարությամբ մենք պետք է կենտրոնացնենք մեր ու-ժերի մաքսիմալումը։

#### IV. ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵԿ ՊԱՅԻԱՐԸ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Իմ խնդրի մեջ չի մտնում ԽՍՀՄ-ի միջազգային զրությանը վերաբերող հարցերի մանրամասն լուսա-րանումը։ Կահճանափակվեմ միայն այն խնդիրներով, ինչ վոր ավելի ակտուալ նշանակություն ունի տվյալ մոմենտի համար։

Հնդհանուր առմամբ ընթացիկ ժամանակաշրջա-նում ԽՍՀՄ-ի և կապիտալիստական յերկրների հարա-ցումը կապիտալիստական յերկրների հարա-

բերությունների մեջ վարելե փոփոխություններ տեղի չեն ունեցել:

Այն պետությունների հետ, վորոնց հետ Խորհրդային Միությունն առաջ ել նորմալ կամ բարեկամական հարաբերություն և ունեցել, ներկայումս ել լիակատար կերպով պահպանվել են այդ հարաբերությունները: Խորհրդային կառավարությունը գործադրում և ամեն միջոց, վորպեսդի ել ավելի ամրապնդի այդ հարաբերությունները խորհրդային քաղաքականության սահմանած հաստատումն սկզբունքների հիման վրա Փակ վոր պետությունների հետ մենք մեր հարաբերությունները գոհացուցիչ չենք համարել, խորհրդային կառավարությունը ձգտել և ապահովել այդ հարաբերությունների բարելավումը, և դա նույնպես ամբողջովին բղխում և խորհրդային քաղաքականությունից, վորն անց և կացվում անփոփոխ կերպով:

Հնդիանուր խաղաղության գործը պաշտպանելու այդ հետեւզողական քաղաքականության համապատասխան ԽՍՀՄ-ն ձեռնարկեց իրար վրա չհարձակվելու համաձայնություն կնքելու բանալցություններին Անհամանի հետ: Այդ բանակցությունները դեռ շարունակվում են: Մենք ձգտում ենք, վոր այդ բանակցությունները բարեհաջող վերջավորություն ունենան: Համենայն դեպս, ինչ վոր կախված և ԽՍՀՄ-ից, արված և և արվում և այդ ուղղությամբ:

Վերջին ժամանակներս չհարձակվելու պակտ կընքելու առաջարկություն և արված մեզ Ռումինիայի, Ֆինլանդիայի և Եստոնիայի կողմից: Մենք գտնում ենք, վոր ինչպես այդ, նույնպես և մյուս, և հատկապես ԽՍՀՄ սահմանակից յերկրների հետ չհարձակվելու պակտ կնքելը լիովին համապատասխանում և խոր-

հըրդային իշխանության խաղաղ քաղաքականությանը և ընդհանուր խաղաղություն պահպանելու շահերին: Առաջվա նման մենք ձգտում ենք, վոր չհարձակման այդ համաձայնությունների կնքման հարցը դրվի պրակտիկ կենսագործման ռելսերի վրա: Այդ ուղղությամբ խորհրդային կառավարության կողմից արվում և այն խորհրդային կառավարությանը, ինչ վոր կախված և ԽՍՀՄ-ից:

Մեր միջազգային դրության համար, իհարկե, կարուրագույն խնդիր են հանդիպանում այն զեղչերը, որոր տեղի յին ունենում է հուավոր Արևելքում, Մանչչուլում: Փաստերը ցույց են տալիս, վոր այդ դեպքի բիայում: Փաստերը ցույց են տալիս, վոր այդ դեպքի բույս միայն չեն կրնառվում, այլև ել ավելի ծավալ-ը վել բացահայտ տեսնեն ունեն:

Հայտնի յե, վոր Ազգերի Լիգան փորձեց միջամտել Մանջուկիայում տեղի ունեցող ուղղական անցքերին, սակայն այդ միջամտությունն ամենելին այն ազգեցությունը չունեցավ, վոր վերջ տա Մանջուրիայի գրավ-մանը և դադարեցնի ուղղական գործողությունները: Նրա միջամտությունը միանգամայն հակառակ որ-դյունը ունեցավ:

Յերկու անգամ Ազգերի Լիգան փորձեց մի յերկու կոնֆերենց առաջարկություններով հրապարակ գալ Ման-կոնֆերենց առաջարկություններով: Մենք գիտենք, թե ջուրիայի ոկուպացիոնի առթիվ: Մենք գիտենք, թե ինչ արդյունք ունեցավ այդ:

Դեպքերի սկզբին Ազգերի Լիգան նույնիսկ վորոշ ժամկետ նշանակեց, այն ե՝ Հոկտեմբերի 14-ը, վորի հետ վորոշ շրջաններ իլլյուզիաներ կապեցին, սպասե-լով, թե այդ որվանից վորոշ բեկում կկատարվի գեպի լով, այսինքն՝ կկրծատվեն ուղղական գործողու-թյունները Մանջուրիայում: սպասելու վոչ մի նման բան չունենալու մասին պատճեն առաջարկությունը առաջարկությունը:

Ապա Հարցի նոր ու չափազանց յերկար քննություն  
նից հետո վերջերս Ազգերի Լիգան վորոշում հանեց  
հինգ պետությունների անունից Մանջուրիա ուղար-  
կել... գիտական հետադրտական հանձնաժողով, այս-  
ինքն՝ ցույց տվեց իր կատարյալ չկամությունն ու ան-  
գործությունը՝ վորեւ չափով խանդարելու ռազմական  
գործողությունների հետագա ծավալումը Մանջուրիա-  
յում: Ազգերի Լիգայի այդ յերկորդ վորոշումն ուղ-  
ղակի ծաղը և հանդիսանում հենց իր իսկ առաջին վո-  
րոշման նկատմամբ, իսկ եյապես սրբագրում և ուղ-  
մական ոկուպացիան և ուղմական գործողությունների  
հետագա ծավալումը Մանջուրիայում:

Այդ ամենը մեզ ստիպում է ուժեղացնել մեր զգո-  
նուրյունը այն դեպքերի նկատմամբ, վոր տեղի յեն  
ունենում Հեռավոր Արևելքում: Մենք չենք կարող մո-  
ռունալ, վոր մեր սահմանները յեզերում են Մանջու-  
րիան: Մենք չենք կասկածում, վոր մեր հեռավոր-արե-  
գելյան հերոսները կլինեն իրենց կոչման բարձրության  
վրա, վորպես Հեռավոր Արևելքում խորհրդային սահ-  
մանների արքուն պահակներ: (Յերկարածու ծափահ-  
րություններ):

Խորհրդային Միության բանվորները և գյուղի աշ-  
խատավորական մասսաներն զրադշած են իրենց ներքին  
գործերով, նրանք համակված են տնտեսությունը  
բարձրացնելու, իրենց կյանքի մակարդակը բարձրաց-  
նելու խնդիրներով: Երանք նույնը ցանկանում են և մյուս  
յերկորների բանվորներին: Սակայն միջազգային կյանքի  
դեպքերը պահանջում են մեզնից ուժեղացնել մեր զգո-  
նուրյունը: Յեկ մենք նորից ենք ընդգծում մեր իմա-  
նական սկզբունքը. մեզ ուրիշի հողը հարկավոր չէ, սա-

կայն մեր հազից վոչ մի քիզ չենք զիշի վոչ դարի: (Մա-  
փակարություններ):

Մոտենում ե զինաքափման հանձնաժողովի նիստի  
դումարումը:

Այդ հանձնաժողովի գումարման ժամկետի—1932  
թվի վետրվարի 2-ի շուրջը այժմ քաղաքական խաղ են  
սարքել իմասկերթական կառավարությունները, վո-  
րոնց շահերը վոչ մի ընդհանուր բան չունեն զինաթափ-  
ման գործի հետ: Փորձեր են արվում հետաձեկել, կամ  
բոլորովին հրաժարվել զինաթափման հանձնաժողով  
հրավիրելու հարցից:

Իմպերիալիստական ուժերի տիրապետող կողմերն  
ավելի շատ ջանք են թափում, վոր զինաթափման հանձ-  
նաժողովը դարձնեն մի կոմիտեա, վորը վոչ մի դժվա-  
րություն չստեղծի իմպերիալիստական տերերի հա-  
մար, հետագա սպառազինման գործում: Ամեն ինչ աշ-  
վում ե, վորպեսզի զինաթափման հանձնաժողովը չըդ-  
րագվի իր անմիջական ինդիքներով, ամենենին չխան-  
գարի սպառազինման աճմանը՝ մանավանդ ամենադո-  
րիդ իմպերիալիստական ուժությունների սպառազին-  
մանը: Վերջիններս այդ գործում ունեցած իրենց մաս-  
նակցության իմաստը տեսնում են միայն նրանում,  
վորպեսզի զինաթափման հանձնաժողովին մասնակցելու  
քողի տակ թաղնված՝ իրենց միանութային ազատ զգան  
ավելի ևս ուժեղացնելու իրենց սպառազինումը և ուղ-  
մա-քաղաքական բլոկներ կազմեն նոր իմպերիալիս-  
տական սրբածերազմների համար:

Վերջինիք իմպերիալիստական պետությունների  
առաջարկությունների ծայրերը նման են իրար: Նրանց  
իմաստը—զինաթափմանը չե, այլ գործողությունների

ականությունը սպառողինման հետուդա աճման դօր-  
ծում :

Կտ միան մի առաջարկ, վոր իրոք դինաթափման  
նորատակ ունի : Այդ առաջարկը մացրել է ԽՍՀՄ-ն : Այդ  
առաջարկուրյան խնայում ե բոլոր յերկրների լիակա-  
տար ու փաստական զինաքափումը : ԽՍՀՄ-ն մնում է  
այն տեսակետին, վոր այդ առաջարկուրյունը միայն ե  
վոր համապատասխանում ե զինաքափման և ընդհա-  
նուր խաղաղուրյան շահերին : Վորպես նվազագույն  
չափ ԽՍՀՄ-ն առաջարկեց մոտակա տարիների լճա-  
քում սպառագինման կրանում կատարել գոնե կիսով  
չափ : Սակայն իմպերիալիստական պետությունները  
նույնիսկ այդ առաջարկն են մերժում : Զնայոծ դրան,  
խորհրդային իշխանությունը մնում է այն տեսակետին,  
վոր դինաթափման միայն մի ծրագիր կա, վորը միա-  
ժամանակ հանդիսանում ե խաղաղության ծրագիր : Դա  
լիակատար դինաթափման ծրագիրն ե, վոր առաջարկել  
է ԽՍՀՄ-ն : (Ծափահարություններ) :

Զինաթափման հանձնաժողովի շուրջն ստեղծված  
աղմուկին գուղընթաց բաղմանում են այն նշանները,  
վորոնք վկայում են, վոր անում ե ընդհանուր խաղա-  
ղուրյանն սպառնացող վտանգը :

Ամենախոր տնտեսական ճղնաժամն ել ալելի յե  
սրում իմպերիալիստական պետությունների միջև  
յեղած հակասությունները, վատթարացնում ե ներքին  
դրությունը՝ զառակարգային հակասությունների սրբ-  
ման հստեանքով : Տնտեսական պայքարը պրոտեկցիո-  
նիզմի բոլոր և զանազան ձերել կիրառմամբ վերածվել  
ե խոկական տնտեսական պատերազմի կապիտալիստա-  
կան տարբեր պետությունների միջև : Մի քայլ ևս և  
շուկաների համար մզվող պայքարը կիրածվի իմպե-

րիալիստական պատերազմի : Աճում է իմպերիալիստա-  
կան նոր սպառմական ավանդուրանների վտանգը :

Առանձնազես ԽՍՀՄ-ն պետք է հաշվի առնի իմ-  
պերիալիստական հարձակման վտանգը : Մեղ շատ լավ  
հայտնի յե, վոր վորոշ զիալմատական կարիքետներ-  
ությ ներկայումս ամենայինանդուն կերպով քննության  
և առնվում ԽՍՀՄ-ի վրա սպառմական հարձակում գոր-  
ծելու հարցը : Զի կարելի մոռանալ, վոր ԽՍՀՄ-ի դեմ  
նախկին սպառմական ինստերվենցիաներ կազմակերպող-  
ներից շատերը դեռ կենդանի յեն և այժմ գործում են  
իմպերիալիստների նոր ներկայացուցիչների հետ՝ միա-  
սին հարձակում սպառբաստելով բանվորական հանրա-  
պետության վրա :

Մանջուրիայի գեղքերի կապակցությամբ մեր և  
արտասահմանյան՝ վորոնց թվում նաև բուրժուական  
մամուլի կողմից մերկացված են բաղմաթիվ պրովոկա-  
ցիաներ ; վորոնցով ճշնում են ԽՍՀՄ-ն սրատերազմի մեջ  
քաշելու : Պատերազմի հրձիգները՝ իմպերիալիստների  
լագերից դեռ շատ ջանքեր կգործադրեն զանազան պրո-  
վոկացիաներով ԽՍՀՄ-ին սրատերազմի մեջ քաշելու,  
մեր պետության վրա սպառմական հարձակում գործե-  
լու համար : Մենք պետք ե այսուհետեւ ևս պատրաստ  
մնենք այդ պրովոկացիաների դեմ :

Այդ բոլորին մենք պատասխանում ենք խաղաղա-  
սիրական հետևողական քաղաքականությամբ : Մենք  
դրան սրատասխանում ենք մեր զգոնության ուժեղա-  
ցումով : Դրան մենք պատասխանում ենք սոցիալիստա-  
կան շինարարության վերելքով, և ամենից առաջ նըս-  
նով, վոր ձեռնարկում ենք արդեն 1932 թվին ավար-  
տելու հնդամյու պլանը :

Մեր յերկրում յեռում և ստեղծագործ աշխատանքը, հսկայական թափով շինարարություն և կատարվում, հաղթականորեն սոցիալիզմ և կառուցվում: Դրանում մենք տեսնում ենք մեր վոչ միայն ներքին, այլև միջազգային դերքերի ամրապնդումը: Ժողովրդական սմբառության պլանի հաղթական իրազրծումով, երնգամյակը չորս տարում ավարտելով, հանուն սոցիալիզմի ամբողջ ֆրանտով ծավալուն պայքար մղելով կառաւասխանենք մեր դասակարգային քշնամիներին: Մեր խնդիրն ե՝ ամրապնդել ընդհանուր խաղաղությունը և միջազգային սոցիալիզմի գործը, ապահովել բանկորդասակարգի հաղթանակը: (Յերկարանի ծափահարություններ):

---

### ՅԵԶՐԱՓԱԿՍԱՆ ԽՈՍՔԸ

1. ՀԻՄՆԱԿԱՆ ԴԻՐՔԱՎՈՐՄԱՆ, ԾԱՆՐ ԱՐԴՅՈՒՆԱ-  
ԲԵՐՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հնկերներ, կոնտրոլ թվերի չուրջը ծաղած վիճաբանությունները ցույց տվին, վոր սեսիան ամբողջապես հավանություն և տալիս ժողովոմխորհի ներկայացրած ժողովրդատնտեսական պլանին: Վեճաբանություններից յերկում և նաև, վոր 1932 թ. գործնական յեղափառություններն ու խնդիրները, ինչպես նրանք նշված են կենտղործկոմի վորոշման նախադում, ձեր կողմէց հավանություն են ստանում: Այդ պատճառով իմ խնդիրը յեղափակման խոսքում խիստ հեշտանում ե:

Հարվածող ե, անշուշտ, հիշել այն մասին, վոր կոնտրոլ թվերի ընդունումով տնտեսական պլանավորման գործը չի վերջանում: Դրանով նա սկսվում և միայն:

Սոցիալիստական չինարարության հիմնական գիծը տվող ժողովրդատնտեսական պլանի հիման վրա կծավալվի գործնական տնտեսական աշխատանքը, վորին իր հերթին քիչ չի մացնում առանձին ուղղումներ, ինչ փոխումներ և հավելումներ տարեկան պլանի մեջ:

Մենք այսակեղ ընդունում ենք տնտեսական պլանի հիմունքները, վորոնք վորոշում են հիմնական դիրքությունները նոր տնտեսական տարվա սոցիալիստական չինարարության մեջ, իսկ մեր տնտեսական պլանը մերշնականապես կկազմվի հաշվի առնելով մեր արդյունա-

բներական ձեռնարկությունների, խորհրդանշակառությունների, կողմանուհառնությունների, տրամադրութիւնների, և այլ միավորների ամբողջ տնտեսական փորձը կամ առնվազն նրա կարևորակությն տարբերը, գյուղական, ընդանալին, յերկրային, հանրապետական և միութենաւական մարմինների տնտեսական փորձը։ Աչա թե ինչո՞ւ, այսոր ընդունելով գալիք տարվա ժողովրդական արհետեսության կոնտրոլ թվերը, մենք թե՛ կենտրոնում և թե՛ տեղերում պետք ե շարունակենք աշխատանքը ժողովրդատեսական պլանի գծով և համակաղես յերեվան հանելու ու ողտագործելու մեջ մոտ յեղած վիթխարի ներքին ռենուրաները, վորոնք կապահովեն նշված պլանի վոչ միայն կառարումը, այլև գերակատարումը։

Կենտրոնակոմի անդամների յերւյթները ցույց տվին, վոր մի շարք գեղաքերում անհրաժեշտ և լրացուցիչ կերպով ստուգել նշված առաջազրությունները և առանձին գոփիսություններ մոցնել։ Հետապայում դրանով պետք ե զրադշեն համապատասխան ժողկումատները, Պետպանը և Ժողկումնորհը։

Այժմ կարենոր և ընդգծել դաշտարված տնտեսական պլանի Հիմնարկան դիրքավորման հաստատում կիրառման անհրաժեշտությունը։ Այդ դիրքավորումը, ինչպես հայտնի յի, կայսնում և այն բանում, վոր հարկավոր և առավելագույն ուժերը կենտրոնացնել մետաղուրդիայի, վառելանյութի, մեղքնաշնարարության և յերկաթուղարյին տրանսպորտի վրա։ Անզուտ, զյուղատնտեսության հարցերը և հատկապես կոլտնտեսությունների ու խորհունակառությունների շնարարության հարցերը նույնապես վերաբերում են առաջնահարգ կարենություններից հարցերի թվին 1932 թ. ինդիքների շարքում։

Գտակ տարբյա տնտեսական պլանի հիմնական դիրքավորման կապակցությամբ, յետ պետք ե կանգ առնեմ ընկե. Վասիլէնկոյի յելույթի վրա։ Այդ ընկերը վարոշ չափով միակողմանիորեն, ուստի և անծիշտ արտահայտվեց այն կապի վերաբերմար, վոր ունի մեր սացիալիստական արդյունաբերությունը կոլտնտեսությունների հետ։ Ընկե. Վասիլէնկոն ասաց հետեւյալը։

«Եներկայումս մենք արդեն տեսնում ենք, վոր մեր գործարաններն ու Փարբիկաները, մեր ծանր արդյունաբերությունը զարգացել են։ Մենք այժմ արդեն—յետ այդ գգում եմ սեսիայում—քիչ ենք խօսում ծանր արդյունաբերության մասին, վորովհետև մենք նրան շատ առաջ ենք տարել։ Զարկավոր ե ասել, վոր առանց կոլտնտշարժման, առանց մեր կոլտնտեսությունների, մեր ծանր արդյունաբերությունը չի կարող առաջ շարժվել։ Աչա թե ինչպես ե մեզ միաձուլել հնգամյակը։ Նա կուլիկոտիվացման բնադրավառում ապացուցեց, վոր՝ մեր սոցիալիստական զյուղատնտեսությունը սերտորեն չաղկապված ե մեր սոցիալիստական արդյունաբերության հետ։ Մենք այսուղ պետք ե հաստատագետ ասենք, վոր հարկավոր ե պայքարել մեր կոլտնտեսությունների ամրացման համար։»

Ընկե. Վասիլէնկոն ճիշտ ասաց, վոր «մեր սոցիալիստական զյուղատնտեսությունը սերտորեն չաղկապված ե մեր սոցիալիստական արդյունաբերության հետ»։ Աբելիոս այդպիս ե։ Այդ ամուր շաղկապից շահաւում ե թե՛ մեկը և թե՛ մյուսը, շահաւում ե թե՛ արդյունաբերությունը և թե՛ զյուղատնտեսությունը, թե՛ բանվոր զատակարդը և թե՛ զյուղացիությունը։

Ընկե. Վասիլէնկոն ճիշտ մատնանշեց նաև «մեր

կոլտնտեսությունների ամբացման համար պայքարից ամենաժեղությունը իսկապես, չափազանց հարկավոր է, վոր մենք պայքարինք մեր կոլտնտեսությունների աշխատանքի բարելավման, նրանց կազմակերպության ամսապնդման համար։ Կոլտնտեսությունների վորպես խոչըր սոցիալիստական տնտեսության բջիջների ամբացումը, արտադրության ճիշտ աղդակերպումը՝ կոլտնտեսություններում, անցկացնելով գործակարձն ու աշխատանքի վոչ միայն ըստ քառակի, այլև ըստ վորպես վարձատրությունը, յեկատունների բաշխումը կոլտնտեսականների մեջ նայած այն բանին, թե այս կամ այն կոլտնտեսականի աշխատանքն ինչքան ոգտակար ե յեղել կոլտնտեսության համար ամբողջապես վերցրած, ինչպես նաև կորոնտեսությունների այն պարտավորությունների լրիվ ու ժամանակին կատարումը, վոր նրանք վերցրել են խորհրդային տնտեսության հանդես, վորի աջակցությամբ աճում են մեր կոլտնտեսությունները, այս ամենը հոկայական կարելորություն ներկայացնող հարցեր են մեր դյուցի և վողջ պետության համար։ Հարկավոր ե ամեն կերպ ուժեղացնել կոլտնտեսություններին ցույց տրվող ողնությունը և գործնականում բարձրացնել կոլտնտեսաբարության զեկավարությունը, համաձայն այն նոր ու ավելի բարձր խնդիրների, վոր ունի կոլեկտիվացումը ավլյալ մոմենտում։ Այլտեղից հետեւում է, վոր պետք ե ուժեղացնել ուշադրությունը մեքենային տեխնիկայով, հարկ յեղած տեխնիկական, աղբօնոմիական, կոլտուրական և քաղաքական կարերով մեր կոլտնտեսությունները հետապայում ամբարտելու ուղղությամբ, և հարկապես ուժեղացնել շարությունը կոլտնտեսություններում աշխատանքի

կազմակերպման հարցերի նկատմամբ։ Մոտեցող շահքի կամպանիան մեղ այդ մասին հիշեցնում և առավել ևս համառունելու։

Բայց ընկերություններին իրավացի չե, յերբ նա կարծում ե, թե կարելի յեւ ավելի քիչ խոսել ծանր արդյունաբերության մասին, վորովհետև մենք նրան շատ ենք առաջ տարել։ Դժբախտաբար, ճիշտ չե, վոր մենք մետալուրգիան շատ ենք առաջ տարել։ Ընդհակառակը։ Ընթացիկ տարում մետալուրգիան մեր ամենաթույլ տեղը հանդիսացավ։ Թեև 1931 թ. հոկայական նոր շինարարություն ծավալվեց ոև մետալուրգիայի գծով, սակայն ինքը՝ մետալուրգիական արտադրաւթյունը առաջ չչարժվեց։ Այդ մեղ ստիպում է 1932 թ. մի շարք բացառիկ միջոցներ ձեռք առնել՝ ոև մետալուրգիան բայց կորին առաջ մղելու համար։ Մենք անցյալ տարվա 5 միլիոն տոնն թուջից 1932 թ. պետք է հասնենք 9 միլ. տոննի։ Սա մի վիթխարի առաջադրություն է, վոր ակտիվ աջակցություն և պահանջում վողջ բանեցորդ ակտիվ աջակցություն է, վոր դասակարգից, վողջ ժողովրդական տնտեսությունից։

Այսքանից հետո հարկավոր չե ապացուցել, վոր իրեն թե այժմ կարելի յեւ ավելի քիչ խոսել ծանր արդյունաբերության մասին։ Խնդիրն այդպես չե դրված։ Ծանր արդյունաբերության հարցը և մանավանդ մետալուրգիայի հարցը գալ տարի վճռական մեղ պետք ե դրավի։ Վողջ տնտեսական տարվա արդյունքներն առաջին հերթին կախված կլինեն այն բանից, թե մենք ինչ չափով կկատարենք մետալուրգիայի, վառելանյութի և մեքենաշինության պլանը։

Իրենք՝ կոլտնտեսությունները դրանում խիստ շահպրգույն են։ Առանց ոև մետալուրգիայի առաջա-

Քրությունները կատարելու, չի կարելի կոլտնտեսություններն ապահովի մեջնաներով, տրակտորներով և ավտոմոբիլներով, վորոնք այս տարի հագարներով են գյուղ զնալու։ Առանց աև մետալուրգիայի պլանը կատարելու, չի կարելի կատարել նաև մեր մյուս տնտեսութեան խնդիրները։ Աւատի մեր ուշաղը ությունը ուն մետալուրգիայի և վողջ ծանր արդյունաբերության նկատմամբ զգալիորեն պետք է ավելանա այս տարվա համեմատությամբ։ Յեթև հարկավոր լինի այդ գործի իրականացման համար կիրառել այս կամ այն միջնորդությունները, վորոնք չոշակելիս լինեն անտեսության մյուս ճյուղերի շահերը, մենք պետք են անենք այդ քայլը և կանենք։

2. ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԸ ՅԵՎ ՄԵՐ  
ԽՆԴԻՐՆԵՐԸ

Մի շաբք ընկերների՝ սևսիայում ունեցած յելութեան ներում նշվեցին խիստ կարեոր տեղական հարցեր, վորոնք հաճախ մեծ նշանակություն ունեն ինչպես առանձին խորհրդային հանրապետությունների աղդային ուժերի աճման ու ծավալման համար, այնպես ել վորդ Խորհրդային Միության համար ընդհանրապես վերցրած։ Այս յելութեան ներից մի քանիսի վրա յետ ոկտոբեր եկանգ առնեմ։

Այսպես, ընկ. Ֆեյզուլլա Խոջայիլը, Աղքություն-ների Սորհբում խոսելով սոցիալիստական շինարա-րության հաջողակի թյունների մասին Աւգրեկոստանում, իրավացի կերպով մատնանշեց այն հանդամենքը, վոր-դալ տարբանից Աւգրեկոստանի արդյունաբերական շի-նարարությունը դդալի չափով առաջ կդնա: Բավական

և ասել, մոր այս տարի սկսվում և Գիրքիկի երեկոտք-  
կայանի և աղոտի խոշորագույն գործարանի շինարա-  
բությունը, վոր ձեռնարկված և պղնձի մշակմանը Ար-  
մա-Ալիկի շրջանում, վար սկսվում և նոր տեքստի կոմ-  
բինատի շինարարությունը և այլն:

Ընէ. Ֆ. Խոջայեվը մտանանչեց նաև այն, վոր ան-  
հրաժանակ և ապահովել Միջին Ասիայի հացի ու աբ-  
դյունաբերական ապրանքների մտակարարման պլա-  
նի կառարումը, հատկապես նկատի ունենալով բամբա-  
կացան շրջանները։ Այս կազմակցությամբ տեղին և  
մտանանշել միքանի անորոշման յերեսությներ։

Միջին Ասխայում, և վոչ միայն Միջին Ասխայում, հաճախ պատահում ե բամբակ արտադրողների հետ կոնտրակտացիոն պայմանագրեր կնքելու այնպիսի պրակտիկա, վորը հանդում ե այդ կոնտրակտացիոն պայմանագրերի կոպիտ խախտմանը՝ այն ստորագրող բամբակագործների և կոլտնտեսությունների կողմից։ Քանի վոր պայմանագրերի կնքմանը զուգընթաց պետական հաց և արդյունաբերական ապրանքներ մատակարարելու պարտավորություններ ե վերցնում, ուստի հաճախ կնքվում են բացահայտորեն ուղղաձայն պայմանագրեր, վարպետի ավելի շատ ստանան պետություննից, իսկ բամբակի հանձնման արդուիսի պայմանագրերը հետո չեն կտարբում։

Ուստի հացի և արդյունաբերական ապրանքների  
մտակարարության ամբողջապես ապահովելու ցանկա-  
լիության վերաբերյալ հայտարարությանը հարկավոր  
է հետեւյալ կերպ պատասխանել։ Յեթև Աւգրեկոսանը  
և մյուս շրջանները հանձն կառնեն ամբողջապես կատա-  
րել կնքված կոնտրակտացիոն պայմանադրելը, ապա,

անշուչտ, պետությունը մատակարարման իր պարտավորությունները կկատարի համաձայն այդ պայմանագրերի: Բայց ընկ. Ֆ. Խոջայելը գիտե, վոր կենտրոնը միջոցներ ե ձեռք առնում Միջին Ասիայի մատակարարման համար սահմանված պլանների կատարման ուղղությունը, ըստ վորում ավելի լավ, քան անցյալ տարի: Մյուս կողմից, Կենտղործկոմը Ուղբեկստանի ներկայացուցիչներից հաստատուն հայտարարություն և սպասում բամբակի մթերման ուղղությամբ նրանց հանձն առած պարտավորությունների կատարման մասին: Թող ուղբեկստանցի ընկերները կատարն բամբակի մթերման իրենց պլանը—դրան համապատասխան պետությունը կարող ե և պետք ե կատարի մատակարարման իր պարտավորությունները:

Սղդությունների Խորհրդում յելույթ ունեցավ նաև ընկ. Մուսաբեկովը: Ընդ վորում ընկ. Մուսաբեկովը հայտարարեց, վոր Անդրկովկան ամբողջապես կիատարի բամբակի մթերման իր պլանը: Նշելով մեզ բոլորին համար այդ խիստ կարեօր հայտարարությունը, մենք պետք ե առաջարկենք բամբակի մթերման մյուս ըրջաններին ևս հետեւ լու այս գեղեցիկ որինակին:

Ընկ. Մուսաբեկովը մատնանշեց նաև այն հանդամանքը, վոր պետք ե ոժանդակել թեյի մշակույթին Անդրկովկասում: Զի կարելի զբա հետ չհամաձայնելի, քանի վոր թեյի զարգացումը Անդրկովկասում խոշոր նշանակություն ունի այդ խնդրում ԽՍՀՄ-ն ոտարերկը յա կախումից ազատ համարում համաձայնելի, մատակարարման գործով, Անդրկովկասում թեյի մշակույթի մատակարարման գործով, Անդրկովկասում թեյի արտադրու-

թյան ավելացման համար ավելի նպաստավոր պայմաններ ստեղծելու նպատակով:

Ընկ. Արդրահմանովը մի շաբթ կարեօր հարցերի հետ միասին ընդդեց Կիրովգրամայում խորհանտեսություններն ավելացնելու անհրաժեշտությունը: Անտարակույթ, հարկավոր ե ուշագրություն դարձնել այդ հայտարարության վրա, վորպեսզի այն ամենը, ինչ կարող են անել տեղական ուժերը վերադաս մարմինների մասնակցությամբ Խորհրդային Կիրովիդայում խոչըն սոցիալիստական գյուղատնտեսություն (խորհանտեսություններ և կուտանսեսություններ) դարպացնելու գործում, ստանա հարկ յեղած աջակցությունը:

Ընկ. Կուլումբետովը միանդամայն ճիշտ մատնանշեց ապարատի նշանակությունը տնտեսական աջատատանքի համար, ինչպես նաև այն, վոր խորհրդային ապարատի կենտրոնական որդաններում գեղ քիչ չեն բլուրուկրատական տարրեր և մասնակորապես այնպիսիք, վորոնց խորթ և մեր լենինյան ազդային քաղաքականությունը, և առանց դրանց զեմ պայքարելու չի կարելի ապահովել մի շաբթ տնտեսական առաջադրությունների ճիշտ իրազորումը տեղերում: Իսկ ընկ. Կուլումբետովի այն հայտարարության, թե Կենտրոնական Գործադիր Կոմիտեն մի հատուկ դիմում պետք է համարակի՝ կոչ անելով մասսաներին իրենց բոլոր ուժերը նվիրելու ժողովրդատնտեսական պլանով 1932 թ. համար նշված առաջադրությունների կատարմանը, ինձ թվում ե պետք ե պատասխանել, վոր կենտրործկոմի ընդունելիք վորոշումը մի լավ կոչ կլինի Միության վողջ աշխատավոր մասսային, վոր նա ինքը կոչ կանի մասսաներին վոչ միայն կատարել, այլև գերակատարել ընդունված պլանը:

Մյուս կողմից, յես պետք ե կանդ առնեմ Միութենական Խորհրդում ընկ. Պիվավարովի ունեցած յելույթի վրա: Ընկ. Պիվավարովը ճիշտ մատնանշեց այն թերությունները, վոր ունեն կենտրոնական մարմինները կատարման ստուգման խնդրում: Իսկապես, բոլոր ժողկոմանները և ժողկոմիորեն պետք ե իրենց ուշ չափությունն ուժեղացնեն ընդունվող վորոշումների կիրառման վաստական ստուգման ուղղությամբ: Դրա համար ել ժողկոմիորեն իր նախազժում առաջարկում ե որեւ ուշադրությունը կատարման ստուգման հարցերի ուղղությամբ: Բայց յեթե ընկ. Պիվավարովն այնի ուշադրությամբ նայեր վոչ միայն կենտրոնական, այլև իր յերկրային մարմինների վրա, ապա, թերեւ, կհամաձայնվեր, վոր նրանց ևս լիովին վերաբերում ե կատարման ստուգումն ուժեղացնելու ցուցմունքը: Ցավալի յի, վոր ընկ. Պիվավարովն այսուղղ չափեց իր փորձը, թե ինչպես ե դրված կատարման ստուգումը չյուսիսային կովկասում:

Պետք ե կանդ առնեմ նաև ընկ. Վինտերի յելույթի վրա:

Դնեպրոստրոյը և Դնեպրոկոմբինատի շինարարությունը, վորոնց գլուխն ե կանդնած ընկ. Վինտերը, ամենաաչքի զարկող տեղն են զբավում մեր սոցիալիստական շինարարության մեջ: Դնեպրոստրոյի հաջողությունները, նրա հաղթական տեմպերը և շինարարության նոր մեթոդները դարձել են մեր օլործանքը և հայտնի յեն գարճել միջազգային մասշարով: Այժմ ինդիրն այն ե, վոր Դնեպրոստրոյի ու Դնեպրոկոմբինատի դեկանալարները, մասնավորապես ընկ. Վինտերը, ինչպես նաև այնպիսի խոշորագույն շինարարությունների դեկանալարները, ինչպիսին ե Սվիրյան հեղորդա-

յանը, վորի գլուխն ե կանդնած ընկ. Դրամֆարոն, առենի իրենց հաստատում խոսքը նրանց տրված առաջադրությունները ժամկետին կատարելու մասին: Այնպիսի խոչոք շինարարություններ, ինչպիսիք են Դնեպրոստրոյը, Դնեպրոկոմբինատը, Սվիրյան շինարարությունը և այլն, ժամկետին ավարտելով քաղաքական մեծ նշանակություն կունենա:

Կավիճին—Նրանք խոստացան:

